Funded by
the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Հայաստանում էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման ուղեցույցներ

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP | karEC

© 2024, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ / Համաշխարհային բանկ

1818 H Street NW

Վաշինգթոն ԿՇ 20433

Հեռախոս՝ +202-473-1000

Կայքէջ՝ www.worldbank.org

**Պատասխանատվությունը**

Այս աշխատանքը հանդիսանում է Համաշխարհային բանկի աշխատակազմի արգասիքը: Այս աշխատանքի շրջանակներում ներկայացվող բացահայտումները, մեկնաբանությունները և եզրակացությունները պարտադիր չեն արտահայտում Գործադիր տնօրենների խորհրդի կամ նրանց կողմից ներկայացվող կառավարությունների տեսակետները:

Այս ուսումնասիրությունը և հաշվետվությունը մշակվել է «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի գործողության» ծրագրի (EU4Environment) ֆինանսավորմամբ: Այստեղ արտահայտվող տեսակետները չեն կարող դիտարկվել որպես ԵՄ պաշտոնական տեսակետը ներկայացնող:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող և ՏՀԶԿ-ի, ՄԱԿ-ի, ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի ծրագրի, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության և Համաշխարհային բանկի կողմից իրականացվող EU4Environment-ն օգնում է Արևելյան գործընկերության երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը և բարելավել իրենց բնակչության բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով բնապահպանական գործողություններին, ցուցադրելով և բացելով հնարավորություններն՝ ավելի կանաչ աճի և շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ ստեղծելու միջոցով:

Համաշխարհային բանկը չի երաշխավորում այս աշխատանքի շրջանակներում ներկայացվող տվյալների ճշգրտությունը, ամբողջականությունը կամ արդիականությունը և պատասխանատվություն չի կրում տեղեկատվության սխալների, բացթողումների կամ տարբերությունների համար կամ որևէ պատասխանատվություն չի կրում այստեղ բերված տեղեկատվության, մեթոդների, գործընթացների կամ եզրակացությունների կիրառության կամ չկիրառելու համար: Այս աշխատանքում բերվող ցանկացած քարտեզում ներկայացվող սահմանները, գույները, անվանումները և ցանկացած այլ տեղեկատվությունըչի ենթադրում Համաշխարհային բանկի որևէ դատողություն, որը վերաբերում է ցանկացած տարածքի իրավական կարգավիճակին կամ նման սահմանների հաստատմանը կամ ընդունմանը:

**Այս հրապարակմանը կխնդրեինք հղում կատարել հետևյալ կերպ**. «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» (EU4Environment) (2024թ.), *Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման ուղեցույցներ* :

Լուսանկարը՝ © Berta Photography

# Երախտագիտություն

Այս ուղեցույցները մշակվել են kartECO (բնապահպանական և էներգետիկ ճարտարագիտության գծով խորհրդատու) և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ) կողմից՝ միջազգային և տեղական փորձագետների հետ միասին:

Հեղինակների թիմը իր անկեղծ երախտիքի խոսքերն է ուղղում Օթարս Օպերմանիսին (Կենսաբազմազանության փորձագետ, ՀԲ), Իրինա Ղափլանյանին (Կլիմայի փոփոխության գծով ավագ մասնագետ, ՀԲ) և Կարեն Աղաբաբյանին («ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» գործողության համակարգողը Հայաստանում)՝ իրենց հույժ կարևոր ուղղորդման և մոնթորության համար ծրագրի ողջ ընթացքում:

Թիմը շնորհակալ է ՀՀ կառավարությանը՝ իր անգնահատելի հետադարձ կապի և ներդրումների համար այս ուղեցույցները մշակելու ընթացքում:

# Բովանդակություն

Տառային հապավումներ և հապավումներ ..... 5

Սահմանումներ ..... 6

Ամփոփագիր ..... 7

Ընդհանուր ակնարկ ..... 9

Առաջարկվող պլանի բովանդակությունն ու պլանավորման գործընթացը ..... 11

**Էմերալդ տարածքների կառավարման ամբողջական պլանների առաջարկվող բովանդակությունը ..... 11**

**ԲՊՀՏ և Էմերալդ միասնական կամ ԱՏ և Էմերալդ միասնական կառավարման պլանների (ԿՊ) առաջարկվող բովանդակությունը ..... 12**

**Այլ հողատարածքներում (պետական, համայնքային կամ մասնավոր) գտնվող Էմերալդ տարածքների կառավարման պլանների առաջարկվող բովանդակությունը ..... 13**

**Շատ փոքր Էմերալդ տարածքների կառավարման պլանների առաջարկվող բովանդակությունը ..... 14**

**Կառավարման պլանի մշակում, վերանայում և վերսկսում ..... 14**

Նախնական պլանավորման փուլ ..... 15

Նախապատրաստական փուլ ..... 16

Շահագրգիռ կողմերի մասնակցային գործընթաց ..... 16

Իրավիճակի վերլուծություն ..... 19

**Անհրաժեշտ ուղենիշ տեղեկատվության համապարփակ ցուցակ ..... 20**

**Հարմարվողական կառավարման պլան ..... 26**

Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների կառուցվածքը (Էմերալդների կառավարման ամբողջական պլանի համար) ..... 29

**Ընդհանուր հրահանգներ ..... 29**

**Առաջարկվող կառուցվածք ..... 30**

Մատենագիտական հղումներ ..... 37

Հավելվածներ ..... 39

Հավելված Ա. Թեմատիկ քարտեզների ստանդարտներ ..... 40

Հավելված Ա. Թեմատիկ քարտեզների ստանդարտներ ..... 41

Հավելված Բ. Թեմատիկ քարտեզների օրինակներ (ցուցադրական քարտեզներ shape ֆայլերում) ..... 43

Հավելված Գ. Գործողությունների ծրագրի շրջանակը՝ գործողությունները տարեկան բաշխելու համար (օրինակ) ..... 51

# Տառային հապավումներ և հապավումներ

| Հապավումը | Անվանումը |
|---|---|
| ԵԽ | Եվրոպայի խորհուրդ |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԵՄ-ՀՇՄԾ | Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի ծրագիր |
| ԱՏ | Անտառային տնտեսություն |
| ՇՄՆ | Շրջակա միջավայրի նախարարություն |
| ԿՊ | Կառավարման պլան |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| SDF | Standart data form |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ԲՀՊՏ | Բնության հատուկ պահպանվող տարածքներ |
| ՄԱԿ ԵՏՀ | ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական կոմիտե |
| ԵՄ-ՀՇՄԾ | Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի ծրագիր |
| ՄԱԿ ԱԶԿ | ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն |

# Սահմանումներ

**Պահպանության աստիճան**[1] - Տեսակի կամ կենսամիջավայրի կարգավիճակի գնահատման արդյունքը՝ տեղական մասշտաբով (պահպանվող տարածք կամ երկիր):

**Պահպանության կարգավիճակ** - Տեսակի կամ կենսամիջավայրի տիպի կարգավիճակի գնահատման արդյունքը՝ կենսաաշխարհագրական մասշտաբով:

**Պահպանման նպատակները**[2] - Չափելի ցուցիչներ՝ ըստ որոշակի տեսակների և միջավայրի, որոնք կարող են կիրառվել հետագա մոնիթորինգում: Այդ նպատակները պետք է ներառեն հետևյալը.

- Տեսակների պոպուլյացիայի պահպանություն կամ աճ:
- Բնակմիջավայրի տեսակների պահպանում կամ աճ:
- Տեսակների միջավայրերի պահպանում կամ բարելավում (այդպիսով բարելավելով մեկ կամ մի քանի կենսամիջավայրերի պահպանման աստիճանը):
- Կենսամիջավայրի պահպանման աստիճանի պահպանում կամ բարելավում:

**Պահպանման միջոցառումներ** - Իրական մեխանիզմներ և գործողություններ, որոնք անհրաժեշտ է կիրառել Էմերալդ տարածքների դեպքում՝ տարածքի պահպանման նպատակներին հասնելու համար: Միջոցառումները կարող են լինել ակտիվ և պասիվ (առանց միջամտության):

**Միջսահմանային էկոլոգիական միջանցք** – Միջսահմանային աշխարհագրական տարածություն՝ սահմանված կառավարչական և գիտական հիմունքներով, որը պարունակում է ռելիեֆով և տնկարկների ծածկույթով բնութագրվող էկոհամակարգերի համակցություն և կարևոր նշանակություն ունի կենսաբազմազանության և լանդշաֆտի պահպանման համար:

**Էմերալդ տարածքի էկոլոգիական բնույթ** - Էկոհամակարգի բաղադրիչների, գործընթացների և այլ էկոլոգիական առանձնահատկությունների կամ բնութագրերի համադրություն, որոնք ազդեցություն ունեն տարածքի որակի և գործունեության վրա:

**Էմերալդ տարածքների կառավարում** - Անհրաժեշտ ակտիվ կամ պասիվ պահպանման միջոցառումների իրականացում՝ տեսակների պոպուլյացիաների և կենսամիջավայրերի տարածքի և որակի պահպանման կամ ընդլայնման համար: Էմերալդ տարածքի «կառավարման» բոլոր այլ հայեցակետերը նույնպես կարևոր են, բայց դրանք պետք է համապատասխանեցվեն և հարմարեցվեն այս առաջնային նպատակին:

[1] Evans, D. & Arvela, M. 2011. Assessment and reporting under Article 17 of the Habitats Directive - Explanatory Notes & Guidelines for the period 2007-2012 – Final Draft. European Topic Centre on Biological Diversity, https://circabc.europa.eu/sd/a/2c12cea2-f827-4bdb-bb56-3731c9fd8b40/Art17-Guidelines-final.pdf

[2] Եվրոպական հանձնաժողովի Բնապահպանական հարցերով գլխավոր տնօրինություն, 2019թ.

# Ամփոփագիր

Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների պատրաստման ուղեցույցների վերաբերյալ առաջարկությունների նպատակն է աջակցել Հայաստանի իշխանություններին Էմերալդ կառավարման պլանների մշակման գործում: Կառավարման այդ պլանները կարևոր նշանակություն ունեն Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի հավելված 4-ում (1996) և հավելված 6-ում (1998) թվարկված տեսակների և բնական կենսամիջավայրերի պահպանության համար՝ ապահովելով դրանց պահպանության համապատասխան միջոցառումներ, որոնք էլ կնպաստեն հասնելու պահպանության բավարար մակարդակի: Այս առաջարկությունների նպատակները հետևյալն են.

- **Տրամադրել** Հայաստանում Էմերալդ տարածքների **կառավարման պլանների մշակման ուղեցույցները**:
- **Ղեկավար մարիններին և կառավարման պլանավորման մարմիններին տրամադրել Էմերալդ տարածքների կառավարման պլանների (ԿՊ-ներ) նախագծման անհրաժեշտ մեթոդաբանությունը**: Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգմամբ զբաղվող մարմինը Շրջակա միջավայրի նախարարությունն է՝ իր մարզային պետական ոչ առևտրային կազմակերպություններով հանդերձ:

Այս Ուղեցույցները նաև տրամադրում են առաջարկվող կառուցվածքը և համառոտ ուղեցույցներ տարբեր սցենարների համար, այդ թվում.

- **Էմերալդ տարածքները հիմնականում ընդգրկվում են բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ)**. եթե Էմերալդ տարածքի առնվազն 70%-ն ընդգրկված է ԲՀՊՏ-ներում և ներառված ԲՀՊՏ ԿՊ-ներում, մշակված Էմերալդ ԿՊ-ն պետք է ավելացվի ԲՀՊՏ ԿՊ-ին՝ հավելվածի տեսքով: Այդ լրացումով կազմվում է ինտեգրված պլան, որը միավորում է ԲՀՊՏ և Էմերալդ տարածքի կառավարման բաղադրիչները: Եթե ԲՀՊՏ-ի տարածքում ներառված է Էմերալդ տարածքի 70%-ից պակասն է ընդգրկված ԲՀՊՏ-ում, ապա խորհուրդ է տրվում մշակել Էմերալդ տարածքի կառավարման առանձին կամ ինքնուրույն պլան (ԿՊ):
- **Էմերալդ տարածքները, որոնք հիմնականում ընդգրկված են անտառտնտեսության կազմում.** ինչպես ԲՀՊՏ սցենարի դեպքում, եթե Էմերալդ տարածքի առնվազն 70%-ը ընդգրկված է ԱՏ-ի տարածքում և ներառված է ԱՏ ԿՊ-ում, ապա պատրաստված Էմերալդ ԿՊ-ն պետք է ավելացնել ԱՏ ԿՊ-ին որպես հավելված: Այդ լրացումով կազմվում է ինտեգրված պլան՝ Անտառտնտեսության և Էմերալդ տարածքի կառավարման բաղադրիչների միավորում: Եթե ԱՏ-ի տարածքում ներառված է Էմերալդ տարածքի 70%-ից քիչը, ապա խորհուրդ է տրվում մշակել Էմերալդ տարածքի կառավարման ինքնուրույն պլան (ԿՊ):
- **Էմերալդ տարածքներ, որոնք գտնվում են այլ՝ պետական, համայնքային կամ մասնավոր հողատարածքներում.** այդ դեպքերում խորհուրդ է տրվում մշակել ինքնուրույն Էմերալդ ԿՊ:
- **Շատ փոքր Էմերալդ տարածքներ.** փոքր չափերի Էմերալդ տարածքների և կամ շատ փոքր թվով թիրախային տեսակների կամ կենսամիջավայրերի համար նույնպես խորհուրդ է տրվում կիրառել ինքնուրույն Էմերալդ ԿՊ:

Ուղեցույցը համառոտ անդրադառնում է Էմերալդ տարածքի ամբողջական կառավարման պլանի մշակմանը: Գործընթացը ներառում է պլանավորման հինգ փուլ՝ նախնական պլանավորում, նախապատրաստական, իրավիճակի վերլուծություն, ադապտիվ կառավարման պլան և միջոցառումների իրականացման մշտադիտարկում ու վերանայում: Այս առաջարկվող ուղեցույցները փորձարկվելու են երկու փորձնական Էմերալդ տարածքներում՝ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի ծրագրի» (EU4Environment) շրջանակներում: Քաղաքականության հետևյալ առաջարկները առաջարկվող միջոցառումներն են՝ ուղղված երկրում Էմերալդ ԿՊ-ների մշակման և հաստատման գործընթացի բարելավմանը և Էմերալդ տարածքների առաջխաղացման համար կարիքներին ազգային մակարդակում:

- **Էմերալդ տարածքի ԿՊ-ի մշակման և հաստատումների պարզեցում և արագացում**: Ուղեցույցի իրականացումը կպարզեցնի երկրում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման և հաստատման գործընթացը:
- **Առանձնակի ուշադրություն դարձնել կառավարման պլանով նախատեսվող միջոցառումների մշտադիտարկմանը և միջոցառումների վերլուծությանը**: Էմերալդ տարածքի կառավարման պլանի արդյունավետության կարևորագույն բաղադրիչ է կանոնավոր մշտադիտարկումը և առաջարկվող միջոցառումների վերլուծությունը: Այդ շարունակական գնահատումը հնարավորություն կտա արժևորելու արդյունավետությունը և որոշելու բնապահպանական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ շտկումները: Կանոնավոր մշտադիտարկումը և վերլուծությունը նաև հնարավորություն կտան իրականացնելու հարմարվողական կառավարում, որի դեպքում ռազմավարությունները կարող են փոփոխվել՝ ելնելով նոր տեղեկատվությունից կամ փոփոխվող իրավիճակից:
- **Իրականացնել կառավարման պլանավորման փաստաթղթերի կանոնավոր թարմացումներ**: Հետևելով Եվրոպական միության փորձին՝ խորհուրդ է տրվում կառավարման պլանները թարմացնել 10 տարին մեկ: Նման պարբերական թարմացումը կապահովի կառավարման պլանների արդիականությունը և համապատասխանությունը բնության պահպանության գործելակերպին ու առաջնահերթություններին: Կանոնավոր թարմացումը նաև հնարավորություն կստեղծի կիրառելու նոր գիտական գիտելիքները և արձագանքելու առաջացած վտանգներին ու սպառնալիքներին:

# Ընդհանուր ակնարկ

Էմերալդ ցանցը բուսատեսակների և բնական միջավայրերի երկարաժամկետ գոյատևումն ապահովելու համար ստեղծված ցանց է: Այն բնության պահպանության գործիք է, որը գործարկվել է 1989 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից՝ Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանման Բեռնի կոնվենցիայի (Բեռնի կոնվենցիա) շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 1982 թվականի հունիսի 1-ին:

«Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման ուղեցույցը» մշակվել է, որպեսզի օգնի ՀՀ իշխանություններին՝ Էմերալդ այս տեղամասերի համար արդյունավետ կառավարման պլաններ մշակելու հարցում: Այդ պլանները հույժ կարևոր են՝ տեսակները և բնական միջավայրերը պաշտպանելու և պահպանման գոհացուցիչ մակարդակների հասնելու համար:

Այս հաշվետվությամբ ներկայացվում է Էմերալդ կառավարման պլանների (ԿՊ-ներ) մշակման մեթոդաբանությունը և կառուցվածքը և տարբեր սցենարների համար ուղղորդում է տրամադրում, այդ թվում նաև հատուկ պահպանվող բնական տարածքներում, անտառային տնտեսություններում (ԱՏ-ներ) և այլ հողերում գտնվող տեղամասերի համար: Այն նաև շեշտադրում է կանոնավոր մշտադիտարկման, ուսումնասիրման և կառավարման պլանների թարմացումների կարևորությունը՝ դրանց արդյունավետությունն ապահովելու և պահպանման զարգացող պրակտիկաներին համապատասխանեցնելու համար: Այս հաշվետվությամբ ներկայացվող խորհուրդ-առաջարկները նպատակ ունեն պարզեցնել Էմերալդ տարածքների համար կառավարման պլանների մշակման և հաստատման գործընթացը, որից կշահեն Հայաստանում թե՛ պատկան մարմինները և թե՛ պահպանման ջանքերը:

Այս խորհուրդ-առաջարկներն իրացնելիս Հայաստանը կարող է բարելավել իր պահպաման ջանքերը և պահպանել իր արժեքավոր տեսակները և բնական միջավայրերը:

Այս ուղեցույցը մշակվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար ծրագրի» շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության (ԵՄ) կողմից:

Ուղեցույցն առաջարկում է.

- Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման կառուցվածքը և ուղեցույցները:
- Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման և իրականացման մեթոդաբանությունը, որով նշանակված և կառավարման պլանավորման մարմինները՝ մասնավորապես ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) և վերջինիս տեղական, պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ-ներ) ունենան մեթոդաբանական բաղկացուցիչներ՝ ՀՀ-ում Էմերալդ տարածքների համար կառավարման պլանների մշակման և իրականացման համար:[3]

Ստորև ներկայացված նախագիծը ներկայացնում է Էմերալդ տարածքների կառավարման ամբողջական, առանձին կառավարման պլանի (ԿՊ) մշակման մեթոդաբանությունը և կառուցվածքը: Բացի այդ, այս հաշվետվությունը ներառում է առաջարկվող կառուցվածքը և համառոտ ուղեցույցներ այն դեպքերի համար, որտեղ.

[3] Արագածի ալպյան արգելավայրի աշխատանքների համակարգումը գտնվում է Ա. Ի. Ալիխանյանի անվան գիտական ազգային լաբորատորիայի պատասխանատվության ներքո, որը նաև հայտնի է որպես Երևանի ֆիզիկայի ինստիտուտ, որը գործում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ:

- **Էմերալդ տարածքների մեծ մասը (առնվազն 70%-ը) գտնվում է ԲՀՊՏ-ներում և ներառված է ԲՀՊՏ ԿՊ-ներում**: Այս դեպքում մշակված Էմերալդ ԿՊ-ն պետք է ավելացվի ԲՀՊՏ ԿՊ-ին հավելվածի տեսքով: Այս ավելացումը կկազմի ինտեգրված պլան (ԲՀՊՏ և Էմերալդ տարածքների միասնական կառավարման պլան): Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ ԲՀՊՏ-ի տարածքում ընդրկված է Էմերալդ տարածքի 70%-ից պակասը, ապա առաջարկվում է մշակել Էմերալդ տարածքի կառավարման ամբողջական, առանձին պլան՝ ԿՊ:
- **Էմերալդ տարածքները (առնվազն 70%-ը) գտնվում է ԱՏ-ի տարածքում և ներառված է ԱՏ ԿՊ-ներում**: Պատրաստված Էմերալդ ԿՊ-ն կավելացվի ԱՏ ԿՊ-ին որպես հավելված և այդպիսով կկազմի ինտեգրված պլան՝ Անտառտնտեսության և Էմերալդ տարածքի միասնական կառավարման պլան (ԱՏ և Էմերալդ տարածքների ինտեգրված պլան): Որևէ այլ դեպքում, այսինքն՝ եթե ԱՏ-ի տարածքում գտնվում է Էմերալդ տարածքի նվազ, քան 70%-ը, ապա առաջարկվում է մշակել Էմերալդ տարածքի կառավարման ամբողջական, առանձին պլան՝ ԿՊ:
- **Էմերալդ տարածքներ, որոնք գտնվում են այլ՝ պետական, համայնքային և/կամ մասնավոր հողատարածքներում**:
- **Էմերալդ տարածքներ, որոնք բնութագրվում են փոքր չափերով և / կամ փոքրաթիվ թիրախային տեսակներով և կենսամիջավայրերով և/կամ թիրախային տեսակների համար հովանոցային տեսակներով**:

<u>Էմերալդ ԿՊ խորհրդատուների պարտականությունը կլինի հիմնավորել ԿՊ-ի շրջանակներում ընտրության չափորոշիչների իրականացումը: Ամեն դեպքում, օրինակ՝ ԱՏ, ՀՊԲՏ և/կամ մասնավոր հողերում գտնվող Էմերալդ տեղամասերը, խորհուրդ է տրվում առանձին Էմերալդ ԿՊ-ն:</u>

Վերոնշյալ ենթատեսակների նպատակն է պարզեցնել և արագացնել Էմերալդ տարածքների կառավարման պլանի մշակումն ու հաստատումը, ինչպես նաև նպաստել Էմերալդ տարածքների առաջխաղացման կարիքների բավարարմանը ազգային մակարդակում: Որևէ անդրսահմանային դեպք չի ներառվել այս ենթատեքստում, քանի որ դա տվյալ աշխատանքի պահանջներից դուրս է: Էմերալդ տարածքների կառավարման պլանների առաջարկված բովանդակությունը քննարկվել և վերանայվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

# Առաջարկվող պլանի բովանդակությունն ու պլանավորման գործընթացը

Էմերալդ տարածքների կառավարման պլանների հիմնական նպատակն այն է, որ Բեռնի կոնվենցիայի 4-րդ (1996)[4] և 6-րդ (1998)[5] բանաձևերում թվարկված բոլոր տարածքներում առկա տեսակներն ու կենսամիջավայրերը պաշտպանված լինեն արտաքին սպառնալիքներից և ապահովված լինեն պահպանության համապատասխան միջոցառումներով պահպանության բավարար աստիճանի հասնելու համար:

Էմերալդ տարածքի պահպանության անհրաժեշտ միջոցառումները պետք է բխեն տեսակների հետ կապված տարածքի պահպանության նպատակներից: Պահպանության անհրաժեշտ միջոցառումները պետք է կապված լինեն Բեռնի կոնվենցայի 6-րդ (1998թ.) և 4-րդ (1996թ.) բանաձերում թվարկված տեսակների ու կենսամիջավայրերի հետ: Պահպանման միջոցառումները սահմանելիս պետք է հաշվի առնել նաև տարածքների սոցիալ-տնտեսական գործունեությունը: Միջոցառումները կարող են լինել ակտիվ և պասիվ (առանց միջամտության):

Այս գլխում սահմանվում են Էմերալդ տարածքների չորս տեսակի կառավարման պլանների համար առաջարկվող բովանդակությունը, որոնք ավելի մանրամասն ներկայացվում են ստորև.

- Ամբողջական, առանձին կառավարման պլաններ Էմերալդ տարածքների համար
- Էմերալդ ԿՊ-ները հավելվածի տեսքով են ավելացվում ՀՊԲՏ կամ Էմերալդ ԱՏ-ների համար
- Այլ հողերի (օրինակ՝ պետական, համայնքային կամ մասնավոր հողի վրա) վրա Էմերալդ տարածքների ԿՊ-ները
- Շատ փոքր տեղամասերում գտնվող Էմերալդ տարածքների ԿՊ-ներ:

## Էմերալդ տարածքների կառավարման ամբողջական պլանների առաջարկվող բովանդակությունը

Ստորև ներկայացված են ԵՄ փորձի և ուղեցույցների վրա հիմնված համապարփակ ամբողջական կառավարման պլանի առաջարկվող բովանդակությունը՝ հաշվի առնելով նաև ԵՄ Թվինինգ ծրագրի արդյունքները, Էմերալդ տարածքների կառավարման ուղեցույցները և Հայաստանի պահպանվող տարածքների ԿՊ-ների առկա բովանդակությունները[6]:

[4] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, բանաձև թիվ 4 (1996 թ.), որտեղ թվարկված են վտանգված բնական միջավայրերը, որոնք պահանջում են հատուկ պահպանության միջոցներ, https://rm.coe.int/16807469e7

[5] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, թիվ 6 (1998 թ.) բանաձևը, որտեղ թվարկված են կենսամիջավայրերի պաշտպանության հատուկ միջոցներ պահանջող տեսակները: https://rm.coe.int/1680746afc

[6] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղանքների կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը: https://rm.coe.int/16807465b6

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընդհանուր տեղեկատվություն և սահմանումներ

ԳԼՈՒԽ 2. ԷՄԵՐԱԼԴ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Էմերալդ տարածք

2.2 Աբիոտիկ միջավայր

2.3 Կենսաբանական միջավայր (կենսամիջավայրեր, ֆլորա և ֆաունա)

2.4 Հողօգտագործում, ներառյալ ներկա վիճակը և սեփականության իրավունքը, ինչպես նաև պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոնները (աբիոտիկ, կենսաբանական, մարդու գործունեություն)

2.5 Պահպանվող օբյեկտ(ներ) (բանաձև 4 և 6)

ԳԼՈՒԽ 3: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

3.1 Պահպանման նպատակների սահմանում տարածքի մակարդակում

3.2 Բնական միջավայրի պահպանման ու տնտեսական գործունեության և դրա զարգացման ներուժի հնարավոր հակասությունների գնահատում

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

4.1 Գործողությունների պլան (նպատակներ և խնդիրներ) և գործողությունների առաջնահերթություններ

4.2 Գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները. i. մարդկային, ii. ժամանակային, iii. ֆինանսական

ԳԼՈՒԽ 5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

5.1 Պահպանության աստիճանի մոնիթորինգ՝ կապված պահպանության նպատակների հետ

5.2 Գործողությունների և դրանց արդյունքների դիտարկումների արձանագրում

5.3 Պլանի վերանայում

ԳԼՈՒԽ 6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված I. Քարտեզներ

Հավելված II. Կամընտրական

## ԲՊՀՏ և Էմերալդ միասնական կամ ԱՏ և Էմերալդ միասնական կառավարման պլանների (ԿՊ) առաջարկվող բովանդակությունը

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընդհանուր տեղեկություններ և սահմանումներ

ԳԼՈՒԽ 2. ԷՄԵՐԱԼԴ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Էմերալդ տարածքը ԲՀՊՏ/ԱՏ տարածքում

2.2 Պահպանության օբյեկտ(ներ)ը (բանաձև 4 և 6)

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՏԱՐՐԵՐԻ ԿԱՋՄԸ

3.1 Պահպանման նպատակների սահմանում տարածքի մակարդակում

3.2 Բնական միջավայրի պահպանման ու տնտեսական գործունեության և դրա զարգացման ներուժի հնարավոր հակասությունների գնահատում

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

4.1 Գործողությունների պլան (նպատակներ և խնդիրներ) և գործողությունների առաջնահերթություններ

4.2 Գործություններն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները. i. մարդկային, ii. ժամանակային, iii. ֆինանսական

ԳԼՈՒԽ 5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

5.1 Պահպանության աստիճանի մոնիթորինգ՝ կապված պահպանության նպատակների հետ

5.2 Գործողությունների և դրանց արդյունքների դիտարկումների արձանագրում

5.3 Պլանի վերանայում

ԳԼՈՒԽ 6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված I. Քարտեզներ

Հավելված II. Կամընտրական

## Այլ հողատարածքներում (պետական, համայնքային կամ մասնավոր) գտնվող Էմերալդ տարածքների կառավարման պլանների առաջարկվող բովանդակությունը

Բովանդակության առաջարկությունները նկարագրված են ստորև:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ներածություն

1.2 Ընդհանուր տեղեկություններ Էմերալդ տարածքի մասին

1.2.1 Աբիոտիկ միջավայր

1.2.2 Կենսաբանական միջավայր (կենսամիջավայրեր, ֆլորա և ֆաունա)

1.3 Պահպանության օբյեկտ(ներ) (բանաձև 4 և 6)

1.4 Հողօգտագործումը, ներառյալ ներկա վիճակը, սեփականության իրավունքը և պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոնները (աբիոտիկ, կենսաբանական, մարդկային գործունեություն)

Գլուխ 2. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

2.1 Սպառնալիքների վերլուծություն

2.2Գործողությունների պլան (նպատակներ և խնդիրներ) և գործողությունների առաջնահերթություններ

ԳԼՈՒԽ 3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

3.1 Պահպանության աստիճանի մոնիթորինգ՝ կապված պահպանության նպատակների հետ

ԳԼՈՒԽ 4. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված I. Քարտեզներ

Հավելված II. Կամընտրական

## Շատ փոքր Էմերալդ տարածքների կառավարման պլանների առաջարկվող բովանդակությունը

Բովանդակության առաջարկությունները նկարագրված են ստորև:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ներածություն

1.2 Ընդհանուր տեղեկություններ Էմերալդ տարածքի մասին

1.2.1 Աբիոտիկ միջավայր

1.2.2 Կենսաբանական միջավայր (կենսամիջավայրեր, ֆլորա և ֆաունա )

1.3 Պահպանվող օբյեկտ(ներ) (բանաձև 4 և 6)

1.4 Հողօգտագործումը, ներառյալ ներկա կարգավիճակը և սեփականության իրավունքը և պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոնները (աբիոտիկ, կենսաբանական, մարդկային գործունեություն)

Գլուխ 2. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

2.1 Սպառնալիքների վերլուծություն

2.2 Գործողությունների պլան (նպատակներ և խնդիրներ) և գործողությունների առաջնահերթություններ

ԳԼՈՒԽ 3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

3.1 Պահպանության աստիճանի մոնիթորինգ՝ կապված պահպանության նպատակների հետ

ԳԼՈՒԽ 4. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված I. Քարտեզներ

Հավելված II. Կամընտրական

## Կառավարման պլանի մշակում, վերանայում և վերսկսում

Էմերալդ տարածքների կառավարման պլանի մշակման առաջարկվող գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից, որոնց համառոտ անդրադարձ է կատարվում ստորև ներկայացված բաժնում:

**Գծանկար 1. Կառավարման պլանների մշակման առաջարկվող փուլերը**




*Աղբյուր՝* Համաշխարհային բանկ

## Նախնական պլանավորման փուլ

Նախնական պլանավորման փուլը, ամենայն հավանականությամբ, կլինի ՀՀ ՇՄՆ-ի պատասխանատվության ներքո:

*Պլանավորման ենթակա Էմերալդ ցանցի տարածք(ների) ընտրության կարգը*

Էմերալդ տարածքի կառավարման պլանի մշակման համար Էմերալդ ցանցի տարածքների ընտրության առաջնահերթությունները որոշելու համար կարող են օգտագործվել հետևյալ չափանիշները.

- Համընկնող ԲՀՊՏ-ի գործող կառավարման պլանի առկայություն:
- Տարածքում ակտիվ մի քանի շահագրգիռ կողմերի (օրինակ ֆերմերների) առկայություն:
- Պահպանության հրատապ խնդիրների առկայություն:
- Պլանի վաղեմության ժամկետի ավարտ և վերանայման անհրաժեշտություն:
- Պլանի մշակման համար հասանելի ֆինանսավորում:
- Հավասարակշռված մոտեցում ապահովելու նպատակով երկրում բոլոր կենսաաշխարհագրական տարածաշրջանների համար ներկայացուցչական տարածքների ընտրություն:

*Օրենսդրական հիմք և գործող կառավարման պլան*

Որևէ համապատասխան նորացված օրենսդրության ներկայացում, որին պետք է ենթարկվի և համապատասխանի կառավարման պլանը: Բացի այդ, յուրաքանչյուր այլ պլան, ինչպես օրինակ՝ տարածաշրջանային պլանավորումը կամ վերականգնվող էներգիայի աղբյուրի պլանավորումը, որը կարող է կիրառելի լինել Էմերալդ տարածքում և դրա անմիջական մերձակայքում, պետք է դիտարկել:

*Վարչական հենք, ԿՊ-ների հաստատում և իրագործում*

ԿՊ-ների մշակման, հաստատման, իրականացման և մոնիթորինգի համար պատասխանատու տեղական ինքնակառավարման, իրավասու մարմինների ու հաստատությունների և գործընկեր կազմակերպությունների նույնականացում:

## Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլն, ամենայն հավանականությամբ, կլինի գիտական հանրության պատասխանատվությամբ՝ ՀՀ ՇՄՆ-ի և խորհրդատվական մարմնի (Բնապահպանական գործակալության) հսկողության ներքո: Այն դեպքում, երբ Էմերալդ տարածքը համընկնում է ԲՀՊՏ-ի կամ ԱՏ-ի հետ, պատասխանատու ՊՈԱԿ-ը պետք է ներգրավվի որպես առանցքային շահագրգիռ կողմ:

*Էմերալդ տարածքների բնութագրերի համառոտ նկարագրությունը (սքրինինգ)*

Անհրաժեշտ է տարածքի հիմնական տարրերի արագ գնահատում նախաձեռնել: Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողովի կողմից ընդունված Էմերալդ տարածքները նկարագրվելու են մշակված Էմերալդի ստանդարտացված տվյալների ձևաթղթով, որը ներառում է դրանց սահմանների մասին տեղեկատվությունը: Էմերալդ տարածքի Էմերալդի ստանդարտացված տվյալների ձևաթղթում պարունակվող տեղեկատվությունը վերլուծելու ժամանակ կարևոր է դիտարկել տեսակների և կենսամիջավայրերի առաջացման և տարածման տվյալների որակի և հուսալիության իմաստով հնարավոր սահմանափակումները:

## Շահագրգիռ կողմերի մասնակցային գործընթաց

Կարևոր է, որ կառավարման պլանի բոլոր դերակատարները հստակ պատկերացում կազմեն, թե ով ինչի համար է պատասխանատու. ժամկետների, տևողության, ֆինանսական աղբյուրների մասին, որոնք առկա են Էմերալդ տարածքի կառավարման պլանի մշակման համար: Այս գործընթացին օգնելու համար Կառավարման պլանը պետք է լինի պարզ, իրատեսական, սեղմ, նպատակային: Ամբողջական և ներառական կառավարման մոտեցման համար կարող են ներգրավել բազմապիսի արհեստավարժ մասնագետներ, այդ թվում նաև նրանք, որոնք կենսաբանության և պահպանման ոլորտներից դուրս են:
Տեղեկատվության, հաղորդակցության և շահագրգիռ կողմերի ներգրավվածության պակասը կարող է կոնֆլիկտի հիմնական աղբյուր դառնալ: Հետևաբար խորհուրդ է տրվում պլանավորման գործընթացում սկզբից ևեթ ներգրավել շահագրգիռ կողմերին՝ երկարաժամկետ պահպանության նպատակներին հասնելու և բնական ռեսուրսների կայուն կառավարումն ապահովելու համար:[7], [8]: Անշուշտ, մասնակցային գործընթացը հիմնված է ակտիվ շահագրգիռ կողմերի նախաձեռնությունների և նախագծում ներգրավվելու պատրաստակամության վրա:

Հայաստանում գոյություն ունի շահագրգիռ կողմերի ներգրավմանն և հասարակական կարծիքի ձևավորման մեխանիզմ[9]: Այնուամենայնիվ, թվում է, որ այս մեխանիզմը ներկայումս ակտիվ չէ պահպանվող տարածքների ԿՊ-ների համար: Ինչպես արդեն նշվել է, ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում առաջարկվել են օրենքի բարելավումներ, ներառյալ՝ ԿՊ-ների գործընթացներին վերաբերող հատուկ հայեցակետեր, ինչպիսիք են իրավասու մարմինների և գործակալության

[7] Gleason et al. (2010). Science-based and stakeholder-driven marine protected area network planning: a successful case study from north central California. Ocean & Coastal Management, 53(2), 52-68.
[8] Bryson & J., Humphrey, H. (2004). What to do when stakeholders matter: A guide to stakeholder identification and analysis techniques.
[9] Շրջակա միջավայրի նախարարը մեխանիզմ ունի, որը կոչվում է «Քաղաքացիական խորհուրդ», որի անդամ են տարբեր հասարակական կազմակերպություններ: Նախարարը սովորաբար խորհրդի նիստերը հրավիրում է ՀԿ-ների պահանջով, սակայն դինամիկն մեծապես կախված է նախարարներից և քաղաքացիական խորհրդի ակտիվությունից:

կարողությունների զարգացումը, Էմերալդ տարածքների ստեղծման և պահպանության ընթացակարգերը, Էմերալդի հիմնադրման շուրջ հանրային քննարկումները և այլն:

Հույժ կարևոր է մանրակրկիտ կերպով նախապատրաստվել և ուշի ուշով կառավարել ցանկացած բաց մասնակցային և խորհրդակցական գործընթաց, որը վերաբերում է Էմերալդ տարածքների ԿՊ-ներին: Նախկին փորձը ցույց է տվել, որ իրենց արժեքներից ելնելով՝ գործընկերները կտարբերվեն տարբեր միջոցառումներում ներգրավման իրենց ցանկության իմաստով: Որոշ շահագրգիռ կողմերին, ինչպես օրինակ՝ բնապահպանական ՀԿ-ներին կարող են հետաքրքրել բնական արժեքները և պահպանության միջոցառումները, մինչդեռ ինդուստրիայի գործընկերները (ինչպես օրինակ՝ ֆերմերներ, անտառապահներ, այլ հողատերեր) հետաքրքրված են պրակտիկ գործողություններով, որոնք կարող են օգուտ բերել այդ իրենց համապատասխան ինդուստրիայի համար: Վերջապես, շահեկան է դիմել բոլոր գործընկերներին՝ ներկայացնելով ԿՊ-ի նախագիծը և հրավիրելով դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել հանրային քննարկման ընթացքում:

Ամեն դեպքում, միջազգային լավագույն պրակտիկայի համաձայն, հաջող խորհրդակցական գործընթացում կարևոր է հաշվի առնել հետևյալ ընդունված տարրերը.

- **Հիմնական շահագրգիռ կողմերի նույնականացում:** Հիմնական շահագրգիռ կողմերի մանրակրկիտ վերլուծությունը կարևոր է շահագրգիռ կողմերի ներգրավման ավելի դիպուկ ռազմավարություն մշակելու համար: Ռեսուրսները պետք է ուղղված լինեն յուրաքանչյուր շահագրգիռ խմբի կարիքներին և մասնավորապես նրանց, ովքեր առավել մեծ հավանականությամբ կարող են ազդեցություն ունենալ գործընթացի վրա (դրական կամ բացասական):
- **Վաղ ներգրավվածություն**: Որպես կանոն, գործընթացում հիմնական շահագրգիռ կողմերի հնարավորինս վաղ ներգրավումը հանգեցնում է լավագույն արդյունքների կամ գոնե հնարավորություն է տալիս խուսափելու քննարկումների բացակայության պայմաններում առաջացող հնարավոր կոնֆլիկտներից:
- **Վստահության մթնոլորտի ձևավորում:** ՇՄՆ և վերջինիս ՊՈԱԿ-ների իրազեկման բարձրացման գործողությունները մշակվել են Բնության և կենսաբազմազանության պահպանման ոլորտում կենսաբազմազանության օրենսդրության իրականացման և ինստիտուցիոնալ զարգացման Հաղորդակցության ռազմավարության համաձայն (2022թ.): Վստահություն ձևավորող հաղորդակցության հիմնական բաղադրիչներն են թափանցիկությունը, պարզությունը, միջանձնային ոչ պաշտոնական շփումը, անկեղծությունը և ժամանակը:

Շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացի ակնարկը ներկայացված է Գծանկար 2-ում: Ըստ ներկայիս մոտեցման՝ խորհուրդ է տրվում հետևել 2-րդ և 4-րդ քայլերին:

## Գծանկար 2. Շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացի ակնկարկ[10]




*Աղբյուր* ՝Jaansoo 2019թ.

*Հողի սեփականատերերի և հողօգտագործողների ներգրավման ժամանակ դիտարկումներ*
Տեղական համայնքի անդամները, հողատերերը և հողօգտագործողները բնական ռեսուրսների կառավարման հարուստ գիտելիքներ և փորձ ունեն: Այդ գիտելիքների օգտագործումը ոչ միայն շատ ավելի արդյունավետ և տեղին կդարձնի կառավարման պլանի մշակումը, այլև կխթանի շահագրգիռ կողմերի բարի կամքը և սեփականության զգացողությունը պահպանվող տարածքների կառավարման պլանի նկատմամբ: [11, 12, 13, 14]
Ստորև ներկայացվում են Էմերալդ և (ԵՄ Նատուրա 2000) ցանցերի համար մշակված փաստաթղթերի հիման վրա կազմված առաջարկություններ հողատերերին, ինչպես նաև ցույց են տալիս, թե ինչպես աջակցել գյուղատնտեսական համակարգերին[15],[16],[17]:

Այսպիսով, կառավարման պլանները մշակելիս խորհուրդ է տրվում հետևյալը.

---

[10] Jaansoo, A. on behalf of the Association of European Border Regions (AEBR) (2019). METHODOLOGY FOR STAKEHOLDER ENGAGEMENT within the project Inter Ventures
[11] Reed, M. S. (2008). Stakeholder participation for environmental management: a literature review. Biologial Conservation 141: 2417 2431.
[12] Leach, W. D., Pelkey, N. W., & Sabatier, P. A. (2002). Stakeholder partnerships as collaborative policymaking: Evaluation criteria applied to watershed management in California and Washington. Journal of Policy Analysis and Management: The Journal of the Association for Public Policy Analysis and Management, 21(4), 645-670.
[13] Leach, W. D., & Pelkey, N. W. (2001). Making watershed partnerships work: a review of the empirical literature. Journal of water resources planning and management, 127(6), 378-385.
[14] Luyet, V., Schlaepfer, R., Parlange, M. B., & Buttler, A. (2012). A framework to implement stakeholder participation in environmental projects. Journal of environmental management, 111, 213-219.
[15] Farming for Natura 2000. Guidance on how to support Natura 2000 farming systems to achieve conservation objectives, based on Member States good practice experiences. 2019. https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/2e55717e-9185-11e9-9369-01aa75ed71a1/
[16] The Emerald Network:A Network of Areas of Special Conservation Interest for Europe Explanatory document and compilation of relevant texts, 2016,. https://rm.coe.int/168074669d
[17] Էմերալդ ցանցի տեղամասերի էկոլոգիական բնույթի փոփոխություններն հայտնաբերելու, զեկուցելու, գնահատելու և արձագանքելու վերաբերյալ խորհուրդ-առաջարկների նախագիծ, 2019թ..

- Ապահովել Էմերալդ տարածքի հողատերերի, օրինակ՝ ֆերմերների իրազեկությունը Էմերալդ տարածքի տեղակայման վայրի և/կամ կարևոր առանձնահատկությունների մասին:
- Տրամադրել նրանց պահպանման գործնական առաջարկություններ, օրինակ՝ հարմարեցնել օրգանական գյուղատնտեսության սկզբունքները՝ կախված գյուղատնտեսական համակարգից, օրինակ՝ ինտենսիվ կամ ավանդական և այլն:
- Գնահատել «Կառավարման համաձայնագիր» առաջարկելու հնարավորությունը (ՇՄՆ-ի և ֆերմերների ասոցիացիայի կամ անհատ ֆերմերների միջև) փոխհատուցման սխեմայով կամ, հնարավորության դեպքում, որևէ այլընտրանքային խրախուսմամբ:
- Էմերալդ տարածքի պահպանման նպատակների ինտեգրում գյուղատնտեսության ֆինանսավորմանը:

*Պետական գերատեսչությունների ներգրավման ժամանակ դիտարկումներ*

Պետական գերատեսչությունների համար անհրաժեշտ է անցկացնել մի շարք հանդիպումներ՝ նախատեսված ծրագրի առաջընթացի մասին տեղեկացնելու և համապատասխան կանոնակարգերի ու օրենքների համապատասխանությունն ապահովելու նպատակով: Նախատեսվում է համատեղ աշխատանք պետական մարմինների հետ հնարավոր կոնֆլիկտների և հակամարտությունների նույնականացման, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված գործողությունների մշակման համար: Պլանավորման փուլի կարիքներին համապատասխան՝ կարող են պահանջվել ԿՊ-ների ներկայացման և վերանայման աշխատաժողովներ:

## Իրավիճակի վերլուծություն

Իրավիճակի վերլուծության փուլը, ամենայն հավանականությամբ, կլինի գիտական հանրության պարտականությունը՝ ՀՀ ՇՄՆ-ի և խորհրդատվական մարմնի (Բնապահպանական գործակալության) հսկողության ներքո: Այդ խորհրդատվական մարմինը, ամենայն հավանականությամբ, կստեղծվի ԵՄ Թվինինգ ծրագրի առաջարկների համաձայն: Այն դեպքում, երբ Էմերալդ տարածքը համընկնում է ԲՀՊՏ-ի կամ ԱՏ-ի հետ, ՊՈԱԿ-ը նույնպես կարող է ներգրավվել որպես հիմնական շահագրգիռ կողմ:

*Տվյալների հավաքագրում*

Այն տվյալները, որոնք պետք է հավաքվեն Էմերալդ ԿՊ-ի խորհրդատուների և փորձագետների կողմից, բացի Էմերալդ տարածքի ստանդարտացված տվյալների ձևաթղթերում պարունակվող տեղեկատվությունից, կարելի է բաժանել երկու կատեգորիայի18. տարածքի աբիոտիկ հատկանիշները և տարածքի բիոտիկ հատկանիշները:
Պահանջվող տեղեկատվության հետևյալ ցանկն ինդիկատիվ է և տարածքից կախված պետք է հետագայում լրացուցիչ հարմարեցվի կենսամիջավայրերի որոշակի նպատակային հատվածներին ու տեսակներին, որոնք հիշատակված են 4-րդ և 6-րդ բանաձևերում, և ելնելով Էմերլալդ ԿՊ-ի փորձագետների թիմի քննական գնահատականներից:

[18] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղանքների ղեկավար ցուցումների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը, https://rm.coe.int/16807465b6

## Անհրաժեշտ ուղենիշ տեղեկատվության համապարփակ ցուցակ

Տեղեկատվության առաջին կատեգորիան ներառում է ընդհանուր և աբիոտիկ հատկանիշների մասին տեղեկություններ.

*Ընդհանուր տեղեկություններ*

- Տարածքի ֆիզիկաաշխարհագրական դիրքը և սահմանները:
- Տարածքի սահմանները և առկա հողօգտագործումը, ներառյալ՝ հարակից բնակավայրերը, առկա հիմնական գործողությունները, օրինակ՝ զբոսաշրջային և արդյունաբերական տարածքներ, ճանապարհների ցանց շրջակայքում և տարածքում, հիմնական ջրային հոսքեր և այլն:
- Սեփականության իրավունք և շահագրգիռ կողմեր, օրինակ՝ տեղացի հովիվներ:
- Տարածքում ռեսուրսների օգտագործման և այլ գործողությունների հետ կապված առկա նախագծեր, ինչպիսիք են քաղաքային նախագծերը, քաղաքային զարգացման ծրագրերը և այլն:
- Կենսաբազմազանության առկա ռազմավարությունների վերանայում տեսակների և կենսամիջավայրերի պահպանման համար (եթե այդպիսիք կան):
- Ինվազիվ օտարածին տեսակների և հիվանդությունների դեմ պայքարի առկա քաղաքականության վերանայում:
- Հրդեհների կանխարգելման, կառավարման պլանների և գործող քաղաքականության վերանայում:

*Տեղեկատվություն տարածքի աբիոտիկ առանձնահատկությունների մասին (եթե միայն առկա է ազդեցություն 4-րդ բանաձևի թիրախ հանդիսացող կենսամիջավայրերի կամ 6-րդ բանաձևի տեսակների վրա):*

- Տեղական կլիմայական գոտին և տեղանքին բնորոշ կլիմայական պայմանները:
- Երկրաբանություն և երկրամորֆոլոգիա:
- Հատուկ գործընթացներ, որոնք կարևոր են կենսամիջավայրի ստեղծման և պահպանման համար, ինչպիսիք են ավազաթմբերի էոլյան պրոցեսները, ջրաճահճային կենսամիջավայրերի համար էրոզիան ու նստվածքների կուտակումը և այլն:
- Հիմնական հիդրոլոգիական և հիդրոգրաֆիկական բնութագրերը:
- Հողատեսակների և հողային գործընթացների բաշխումը և բնութագրերը:

*Տարածքի բիոտիկ առանձնահատկությունների մասին տեղեկատվություն*

- Բեռնի կոնվենցիայի 4-րդ (1996թ.) և 6-րդ (1998թ.) բանաձևերում թվարկված բնական կենսամիջավայրերի և տեսակների մասին տեղեկատվությունը, ներառյալ՝ դաշտային գույքագրումը (ստանդարտացված տվյալների ձևաթղթերը լրացնող տեղեկատվությունը):
- Այլ կենսամիջավայրեր (միայն այն դեպքում, եթե դրանք կարևոր են 6-րդ բանաձևով ամրագրված տեսակների համար, բայց ներառված չեն 4-րդ բանաձևում):

Անհրաժեշտության դեպքում դաշտային հետազոտություններ կարելի է իրականացնել՝ քարտեզագրելու 4-րդ և 6-րդ բանաձևերում ընդգրկված կենսամիջավայրերի և տեսակների տեղամասերը: Այս հետազոտությունը կներառի անհրաժեշտ ողջ տեղեկատվության

հավաքագրումը՝ որոշելու բնական միջավայրերը, դրանց տարածական սահմանները և դրանց բաշխման տարածքները հասկանալու համար:

*Տվյալների աղբյուրներ*

Համապատասխան աղբյուրները, որոնք կարող են օգտագործվել խորհրդատուների կողմից Էմերալդ ԿՊ պատրաստելիս, ներկայացվում են Աղյուսակ 1-ի շրջանակներում:

## Աղյուսակ 1: Համապատասխան աղբյուրները, որոնք կարող են օգտագործվել խորհրդատուների կողմից Էմերալդ ԿՊ պատրաստելիս

| Մատենագիտական ցանկերի և/կամ տվյալները | Աղբյուր և/կամ հղում |
|---|---|
| Էմերալդ ցանցի հղումների հարթակ | https://www.coe.int/en/web/bern-convention/emerald-network-reference-portal |
| Էմերալդ ցանցի ընդհանուր արտապատկերման միջոց և Էմերալդ տարածքի սահմաններ | https://emerald.eea.europa.eu/ |
| EEA Էմերալդ ցանցի Բարոմետրի աղյուսակ | https://tableau-public.discomap.eea.europa.eu/views/EmeraldBarometerdashboard/Barometertable?%3AshowAppBanner=false&%3Adisplay_count=n&%3AshowVizHome=n&%3Aorigin=viz_share_link&%3AisGuestRedirectFromVizportal=y&%3Aembed=y |
| Էմերալդ տարածքների ստանդարտացված տվյալների ձևաթղթեր | https://emerald.eea.europa.eu/ և Բուսաբանության ինստիտուտ (Ա.Լ. Թախտաջյան) |
| Կենսաաշխարհագրական գնահատման սեմինարների եզրակացություններ | Թռչուններ https://rm.coe.int/birds-final-conclusions-budapest-october-2019/168098e636 |
| | Կենդանիներ, բացի թռչուններից https://rm.coe.int/detailed-final-conclusions-on-the-representation-of-animal-species-fro/1680779ed7 _ |
| | Բույսեր https://rm.coe.int/detailed-final-conclusions-on-the-representation-of-plant-species-from/1680779ed9 |
| | Կենսամիջավայրեր https://rm.coe.int/detailed-final-conclusions-on-the-representation-of-habitats-from-res-/1680779ed8 |
| | [1] https://rm.coe.int/proposal-of-a-monitoring-framework-to-monitor-the-implementation-of-th/16809f8777 |
| | Հաշվարկված՝ https://www.coe.int/en/web/bern-convention/conclusions-of-the-biogeographical-seminars հիման վրա |
| Էմերալդ - տարածական տվյալներ – Shapefile | https://cdr.eionet.europa.eu/am/bc/emerald/ |
| Կառավարման միավորներ | https://data.humdata.org/dataset/cod-ab-arm |
| Օդերևութաբանական տվյալներ | http://armsis.cas.am/layers/?limit=5, https://www.worldclim.org/ |
| Երկրաբանական-հողային տվյալներ և քարտեզներ | http://armsis.cas.am/layers/geonode:Soil_map0 |
| Ներկա ԲՀՊՏ-ների և ԱՏ-ների ԿՊ-ների ֆայլեր, եթե այդպիսիք կան | http://www.mnp.am/en/environment/general-information, ՇՄՆ, ՊՈԱԿ-ներ |
| Արբանյակային պատկերներ | Landsat և Sentinel պատկերներ, բարձր լուծելիության աստիճանով պատկերներ (օրինակ՝ Google Earth) |
| Կենսաբանական տեղեկություն 4-րդ և 6-րդ բանաձևերի տեսակների և կենսամիջավայրերի մասին | Համալսարաններ/հետազոտական կենտրոններ, օրինակ՝ Բուսաբանության ինստիտուտ (Ա.Լ. Թախտաջյան) |
| Հայաստանի բնական կենսամիջավայրեր | https://www.researchgate.net/publication/303689840_Habitats_of_Armenia |

| | |
|---|---|
| Էմերալդ էկոլոգիական ցանցի ներդրումը կենսաբազմազանության և կենսամիջավայրերի պահպանման գործում. Հայաստանի օրինակի ուսումնասիրություն | https://www.researchgate.net/publication/334494897_Contribution_of_Emerald_ecological_network_to_biodiversity_and_habitats_conservation_Case_study_of_Armenia |
| «Բրդլինքս Հայաստան» ՀԿ. Թռչունների մոնիթորինգի ազգային շտեմարան | https://armenian-bird-census.weebly.com/ |
| Հայաստանում թիթեռների պահպանություն | https://www.butterfly-conservation-armenia.org/agarak.html |
| Հայաստանի թռչունների ստուգաթերթ, (թարմացվել է 2020 թ. մարտի 1-ին և 2022 թ.) | https://www.researchgate.net/publication/340081697_Annotated_checklist_to_the_Birds_of_Armenia_updated_on_March_1_of_2020, |
| | |
| | https://en.wikipedia.org/wiki/List_of_birds_of_Armenia (The Clements Checklist of Birds of the World |
| | (2022 խմբ.) |
| Հայաստանի Հանրապետության բույսերի և կենդանիների Կարմիր գիրք, 2010 թ. | http://www.env.am/karmir-girq (Հայերեն) |
| Հայաստանի թռչունների դաշտային ուղեցույց | Adamian, M.S. and Klem, D. Jr. 1997. A Field Guide to the Birds of Armenia. Oakland: |
| | American University of Armenia Corporation. |
| | Online version: (https://www.acopiancenter.am/field-guide-boa-orders.asp) |
| Հայաստանի թռչունների ձեռնարկ | Adamian, M.S. and Klem, D. Jr. 1999. Handbook of the Birds of Armenia. Oakland: American University of Armenia Corporation |
| Հայաստանում քաղցրահամ ջրերի կենսաբազմազանության առանցքային տարածքների ատլաս | Freshwater Ecosystems and Biodiversity: Atlas of Freshwater Key Biodiversity Areas in Armenia, WWF Armenia, 2015 (https://wwf.panda.org/wwf_news/?287671/Atlas-of-Freshwater-Key-Biodiversity-Areas-in-Armenia) |
| Եվրոպական բնադրող թռչունների ատլաս 2 | Keller, V., Herrando, S., Voříšek, P., Franch, M., Kipson, M., Milanesi, P., Martí, D., Anton, M., Klvaňová, A., Kalyakin, M.V., Bauer, H.-G. & Foppen, R.P.B. (2020). European Breeding Bird Atlas 2: Distribution, Abundance and Change. European Bird Census Council & Lynx Edicions, Barcelona. |
| | https://ebba2.info/ |
| Էմերալդ տարածքների կառավարման միջոցառումների օրինակներ | Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիայի հավելված 1-ում Էմերալդ տարածքների կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը, https://rm.coe.int/16807465b |

*Տարածքում հայտնաբերված կենսամիջավայրերի և տեսակների պահպանության աստիճանի գնահատում*

Կառավարման պլանավորման գործընթացի համար շատ կարևոր է Էմերալդ տարածքում հայտնաբերված կենսամիջավայրերի և տեսակների կարգավիճակի գնահատումը: Այդ գնահատումը կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն՝ որոշելու պահպանության նպատակները, սահմանելու համապատասխան պահպանության միջոցառումները և կօգնի որոշակիացնելու առաջնահերթությունները, քանի որ տարածքներում առկա ոչ բոլոր խնդիրներին է հնարավոր միանգամից լուծում տալ, հատկապես եթե խոսքը մեծ տարածքների մասին է:

Ինչ վերաբերում է կենսամիջավայրերի պահպանման կարգավիճակին, ապա յուրաքանչյուր կենսամիջավայրի գնահատումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները[19].

- Բնական կենսամիջավայրի մակերեսը յուրաքանչյուր տեղամասում և ընդհանուր ՀՀ-ում:
- Կենսամիջավայրի առանձնահատուկ կառուցվածքը և գործառույթները:
- Կենսամիջավայրի բնորոշ տեսակների կարգավիճակը:

Խորհուրդ է տրվում, ի լրումն ստանդարտացված տվյալների ձևաթղթերի տեղեկատվությանը և տեսակների նախկին գնահատմանը, կատարել պահպանման արժեք ունեցող բոլոր կարևոր տեսակների զույգագրում և քարտեզագրում:

Յուրաքանչյուր տեսակի և/կամ տեսակների խմբի գնահատումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները (ցուցանիշ).[20]

- Թիրախային տեսակների պոպուլյացիայի չափն ու դինամիկան և թիրախային տեսակների քանակը մեկ տարածքում:
- Հատուկ տեսակների պոպուլյացիայի փոփոխականության երկարաժամկետ միտումը, որոնք կարող են պոպուլյացիայի զգալի բնական տատանումներ ունենալ, օրինակ՝ չվող թռչունները, երգեցիկ թռչունները և այլն:
- Թիրախային տեսակների բնական տարածվածությունը, ներառյալ տարածքում տեսակների տարածման բոլոր կետերի համակարգված քարտեզագրում:
- Կենսամիջավայրի չափը և որակը, որն ապահովում է տեսակների պոպուլյացիաների գոյատևումը, օրինակ՝ կայունություն/անկայունություն, խոցելիություն, որոշակի կառուցվածքների և առանձնահատկությունների առկայություն, կերակրման բազայի որակ, մարդու կողմից ներգործություն, առկա և ապագա սպառնալիքներ:

*Սպառնալիքների և գործող ճնշումների վերլուծություն*

Յուրաքանչյուր պահպանվող օբյեկտի դեպքում կարող են լինել տարբեր ճնշումներ (P) և սպառնալիքներ (T): Ճնշումները վերաբերում են այն ռիսկերին, որոնց այսօր բախվում է պահպանվող օբյեկտը, մինչդեռ սպառնալիքները վերաբերում են այն ռիսկերին, որոնց նա կարող է բախվել առաջիկա վեց կամ նույնիսկ տասներկու տարվա ընթացքում: Ճնշումների և սպառնալիքների պաշտոնական ցանկը դասակարգված է, և յուրաքանչյուր կատեգորիա ունի իր ծածկագիրը (օրինակ՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ռեսուրսների արդյունահանում (հանքային, տորֆ, չվերականգնվող էներգիայի պաշարներ), բնակելի, առևտրային, շինարարություն և օգտագործում, արդյունաբերական ու հանգստի ենթակառուցվածքներ և տարածքներ): Յուրաքանչյուր ճնշման կամ սպառնալիքի համար ազդեցության աստիճան է սահմանվում (ցածր, միջին, բարձր): Ճնշումների և սպառնալիքների գրառումներից բխում են դրանց ապագա կառուցվածքը և միտումները.

- **Բարենպաստ (կամ գերազանց) պահպանության աստիճան** - Չկան բարձր աստիճանի և մինչև մեկ միջին աստիճանի ճնշումներ (P) կամ սպառնալիքներ (T), կամ դրական ազդեցությունների քանակն ու նշանակությունը գերազանցում են ճնշումներն (P) ու սպառնալիքները (T):

[19] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը:, https://rm.coe.int/16807465b6

[20] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը:, https://rm.coe.int/16807465b6

- **Պահպանության լավ աստիճան (կամ լավ)** - Միջին նշանակության մինչև 3 ճնշում կամ սպառնալիք կամ դրական ազդեցությունների մեծ թիվը կամ կարևորությունը գերակշռում են ճնշումներին կամ սպառնալիքներին:
- **Պահպանության չափավոր (կամ սահմանափակ) աստիճան** - առնվազն մեկ բարձր կարևորության սպառնալիք (T) կամ ճնշում (P) և/կամ ավելի քան 3 միջին կարևորության ճնշում (P) կամ սպառնալիք (T) ՝ առանց դրական ազդեցությունների, որոնք կարող էին հավասարակշռել դրանք:

**Կլիմայի փոփոխության սպառնալիքի և ճնշման հիմնական հայեցակետերը (կամընտրական)**

Անհրաժեշտ է գնահատել կլիմայի փոփոխության հիմնական ազդեցությունը Էմերալդ տարածքների և տեսակների վրա, հատկապես՝ զգայուն էկոհամակարգերում[21]: Հիմնական հայեցակետերը, որոնք պետք է հաշվի առնել, հետևյալն են.

- միջին ջերմաստիճանի զգալի տատանումներ (եթե կիրառելի է),
- տեղումների և գոլորշիացման ռեժիմի փոփոխություն,
- արտակարգ իրավիճակների հաճախականություն:

Դրանց նույնականացումից և ազդեցության մակարդակի գնահատումից հետո վտանգները պետք է դասակարգվեն ըստ առաջնահերթության՝ ելնելով ազդեցության մակարդակից:

*Պահպանության նպատակները տարածքի մակարդակում*

Տվյալների հավաքումից և գնահատումներից հետո կարևոր է ձևակերպել և ներկայացնել պահպանության նպատակները, որոնք հիմք են դառնալու **կառավարման ռեժիմների և նորմերի ձևակերպման համար**: Տարածքի մակարդակում պահպանության նպատակների որոշման համար պահպանության թիրախներ կարող են սահմանվել Էմերալդ տարածքներում կենսամիջավայրերի և տեսակների համար, կա՛մ առանձին-առանձին կամ ամբողջ պոպուլյացիայի համար (բոլոր թիրախային կենսամիջավայրերը կամ տեսակները), ինչպիսիք են.

կենսամիջավայրերի համար այդ թիրախները կարող են ներառել.

- կայուն միտումի պահպանում կամ կենսամիջավայրի տարածքի ավելացում (օրինակ՝ տարածքի ավելացում XX հեկտարով կամ ընդհանուր մակերեսի ավելացում 20%-ով),
- տիպիկ տեսակների առկայության ավելացում (օրինակ՝ առանձնյակների կամ զույգերի XX թվով կամ նրանց պոպուլյացիայի 20%-ով ավելացում),
- կենսամիջավայրի կառուցվածքի բարելավում (օրինակ՝ անտառային կենսամիջավայրի 5 մետրից բարձր բարձրությամբ բնափայտային տեսակները, որոնք ավելի քան XX հեկտար տարածք ունեն կամ զբաղեցնում են ընդհանուր տարածքի 75%-ը),
- կենսամիջավայրի գործառույթների բարելավում (օրինակ՝ առնվազն 3 տարբեր թռչունների տեսակներ են հայտնաբերված ափամերձ մացառուտներում),
- կենսամիջավայրի տեսակի պահպանման աստիճանի բարելավում (օրինակ՝ B աստիճանից հասնելով մինչև A աստիճան /Evans & Arvela (2011)[22]/):

[21] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը:, https://rm.coe.int/16807465b6

[22] Evans, D. & Arvela, M. 2011. Assessment and reporting under Article 17 of the Habitats Directive - Explanatory Notes & Guidelines for the period 2007-2012 – Final Draft. European Topic Centre on Biological Diversity, https://circabc.europa.eu/sd/a/2c12cea2-f827-4bdb-bb56-3731c9fd8b40/Art17-Guidelines-final.pdf

Պահպանման թիրախները պետք է մանրամասն դիտարկել յուրաքանչյուր տեսակի համար: Դրանք կարող են ներառել.

- կայուն միտումի պահպանում կամ թիրախային տեսակների պոպուլյացիայի ավելացում (օրինակ՝ առանձնյակների կամ զույգերի XX թվի պահպանում կամ ավելացում կամ պոպուլյացիայի ընդհանուր աճ 10%-ով),
- իրենց կենսամիջավայրի պահպանության աստիճանի բարելավում (օրինակ՝ կենսամիջավայրի կամ տեսակների պահպանման աստիճանը, որոնցում տեսակը բնադրում/սնվում է և այլն),
- տեսակի կենսամիջավայրի տարածքի պահպանություն կամ բարելավում (օրինակ՝ տարածքը մեծացնելով XX հեկտարով կամ զբաղեցրած ընդհանուր մակերեսը մեծացնելով 10%-ով),
- տեսակների պահպանության կարգավիճակի բարելավում (օրինակ՝ B-ից A, Կենսամիջավայրի մասին դիրեկտիվի Հոդված 17-ի շրջանակներում):[23]

**Տարածքի մակարդակում պահպանության նպատակների օրինակներ**

1. X տարածքն առանձնացվել է՝ հաշվի առնելով դրա կարևորությունը կիսաբնական խոտածածկ տարածքներով (6210) կենսամիջավայրի համար: Համաձայն ստանդարտացված տվյալների ձևաթղթերի՝ կենսամիջավայրը պահպանության վատ վիճակում է (ստանդարտացված տվյալների ձևաթղթերում նշված է որպես C դաս): Հետևաբար, այս տարածքի պահպանության նպատակը կարող է սահմանվել 10 տարվա ընթացքում կենսամիջավայրի պահպանությունը A դասի՝ գերազանց դարձնելը, հաշվի առնելով, որ այդ կենսամիջավայրը տարածաշրջանում պահպանության շատ անբարենպաստ կարգավիճակ ունի: Այդ նպատակին հասնելու համար նախագծվել են անհրաժեշտ պահպանության միջոցառումները:
2. y տարածքն առանձնացվել է, քանի որ այն ակտիվ բարձրադիր ճահիճների մեծ տարածք (7110) ունի: Համաձայն ստանդարտացված տվյալների ձևաթղթերի՝ այս կենսամիջավայրը գերազանց վիճակում է (ստանդարտացված տվյալների ձևաթղթերում նշված է որպես A դաս): Ուստի այդ տարածքի պահպանության նպատակը սահմանվել է պարզապես տվյալ վիճակի պահպանությունը, նույնիսկ չնայած այն հանգամանքին, որ կենսամիջավայրի տեսակները տարածաշրջանում պահպանության անբարենպաստ կարգավիճակ ունեն:

Քանի որ տարածքի համար պահպանության ոչ մի միջոցառում չի նախատեսվում ըստ հոդված 6(1)-ի, չի պահանջվում ակտիվ կառավարման որևէ միջոցառում այս վիճակը պահպանելու համար:

Սկզբունքորեն պահպանության նպատակները պետք է սահմանվեն յուրաքանչյուր տարածքի և այն բոլոր տեսակների և կենսամիջավայրերի համար, որոնք նշանակալի չափով ներկա են այնտեղ: Դրանք պետք է հիմնված լինեն տեսակների և կենսամիջավայրերի էկոլոգիական պահանջների վրա և պետք է սահմանեն այդ տեսակների և կենսամիջավայրերի պահպանության ցանկալի վիճակը: Դրանք պետք է ստեղծվեն յուրաքանչյուր տեսակի և կենսամիջավայրի պահպանության գնահատման շրջանակում, ինչպես գրանցված է ստանդարտացված տվյալների ձևաթղթերում: Պահպանման նպատակները պետք է նաև արտացոլեն տարածքի՝ որպես Էմերալդ ցանցի մասի կարևորությունը:

[23] Evans, D. & Arvela, M. 2011. Assessment and reporting under Article 17 of the Habitats Directive - Explanatory Notes & Guidelines for the period 2007-2012 – Final Draft. European Topic Centre on Biological Diversity, https://circabc.europa.eu/sd/a/2c12cea2-f827-4bdb-bb56-3731c9fd8b40/Art17-Guidelines-final.pdf

## Հարմարվողական կառավարման պլան

Ստորև ներկայացված փուլը, ամենայն հավանականությամբ, կլինի գիտական հանրության պարտականությունը՝ ՇՄՆ-ի և խորհրդատվական մարմնի (Բնապահպանական գործակալության) վերահսկողությամբ: Այն դեպքում, երբ Էմերալդ տարածքը համընկնում է ԲՀՊՏ-ի կամ ԱՏ-ի հետ, համապատասխան ՊՈԱԿ-ը նույնպես պետք է ներգրավվի որպես հիմնական շահագրգիռ կողմ:

Հարմարվողական ԿՊ-ը պահանջում է մոնիթորինգի հիման վրա պահպանությանն ուղղված գործողությունների հաջողության կանոնավոր վերանայում և պահպանման միջոցառումներում սխալների առկայության դեպքում անհրաժեշտ շտկումներ:

*Պահպանության միջոցառումներ*

Պահպանության միջոցառումները պետք է որոշվեն Էմերալդ տարածքի և Էմերալդ ցանցի մակարդակում առկա միջոցառումների համաձայն, որոնցից վերջինը յուրաքանչյուր դեպքի համար սպեցիֆիկ է:

Պահպանության յուրաքանչյուր միջոցառում պետք է հիմնավորված լինի միայն այն դեպքում, եթե նպաստում է պահպանության նպատակների իրագործմանը: Հետևաբար այս ենթագլխի պատրաստման ընթացքում շատ կարևոր է հասնել միջոցառումների և պահպանության կարճաժամկետ կամ երկարաժամկետ նպատակների միջև հստակ կապի հաստատմանը: Կառավարման միջոցառումները պետք է ունենան երկարաժամկետ տեսլական (20-50 տարի):

Խորհրդատուները Էմերալդ տարածքների կառավարման ուղեցույցի հավելված 1-ում կարող են գտնել կառավարման միջոցառումների օրինակներ՝ Էմերալդ տարածքի մակարդակի համախատասխան գործընթացների իրականացման համար[24]: Սրանք ընդամենը հնարավոր միջոցառումների նմուշ են, որոնք տրված են կառավարման հետևյալ վեց կատեգորիաներից յուրաքանչյուրի համար. (1) առկա ճնշումների աստիճանի նվազեցում, (2) էկոհամակարգերի և տեսակների դիմացկունության բարձրացում, (3) լանդշաֆտների ձևավորման բնական գործընթացներին համապատասխանեցում, (4) անհրաժեշտ աբիոտիկ պայմանների ապահովում, (5) արտակարգ իրավիճակների կառավարում և (6) ինվազիվ օտարածին տեսակների վերահսկում:

Ցանցի մակարդակով պահպանման միջոցառումները դժվար է իրականացնել փոքր և մեկուսացված տարածքներում: Մյուս կողմից՝ չափերով մեծ կամ այլ տարածքների հետ կապված տարածքների պարագայում խրախուսվում է կառավարումը ցանցի մակարդակում: Ցանցի մակարդակով կառավարման հաջողության համար պետք է ուշադրություն դարձնել հետևյալին[25] (կամընտրական).

- առաջնահերթ համարվող կենսամիջավայրերի ընտրություն, որը կօգնի տեսակների տեղաշարժին,
- կապի բարելավում միջանցքների ստեղծման միջոցով:

[24] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը:, https://rm.coe.int/16807465b6

[25] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը:, https://rm.coe.int/16807465b6

*Պահպանման միջոցառումների իրագործում*

Կարևոր է ընդգծել, որ Էմերալդ տարածքի պահպանության և կառավարման գործում արդյունավետ միջոցառումների ներդրումը մեծ մարտահրավեր է, որը պահանջում է այդ գործում ներգրավված և/կամ դրա ազդեցությունը կրող բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը:
Դեռևս անհրաժեշտություն է յուրաքանչյուր տարածքի համար ՇՄՆ-ի, ինչպես նաև իրավասու մարմինների ու գերատեսչությունների հետ բաց և թափանցիկ քննարկումը, եթե Էմերալդ տարածքն ամբողջությամբ համընկնում է ՊՏ-ի հետ կամ դրա մի մասը գտնվում է ԱՏ-ի կամ այլ հողերի (պետական, համայնքային կամ մասնավոր հողատարածքների) սահմաններում:
Կարևոր է, որ կառավարման պլանի բոլոր դերակատարները հստակ պատկերացում կազմեն, թե ով ինչի համար է պատասխանատու. ժամկետներ, տևողություն, ֆինանսական աղբյուրներ և այլն: Կառավարման պլանը պետք է լինի պարզ, իրատեսական, սեղմ, նպատակային և դյուրըմբռնելի, կարող են ներգրավված լինել տարբեր մարդիկ, հաճախ ոչ միայն կենսաբաններ և բնապահպաններ, այլև այլ մասնագիտությունների լայն շրջանակի մարդիկ:
Կարևոր համարվող գործողություններն են.

- Էմերալդ տարածքներում վտանգված տեսակների պահպանության և տարածաշրջանային զարգացման այլընտրանքային մոդելների ուղղությամբ կարողությունների զարգացում և վերապատրաստումներ:
- Էմերալդ տարածքներում վտանգված տեսակների պահպանության և տարածաշրջանային զարգացման այլընտրանքային մոդելների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում:
- Էկոլոգիապես կայուն տնտեսական գործունեության խթանում, ինչպիսիք են օրգանական գյուղատնտեսությունը և այլք:

*Միջոցառումների իրագործման մոնիթորինգ և վերանայում*

Ստորև ներկայացված փուլը, ամենայն հավանականությամբ, կլինի գիտական հանրության պարտականությունը՝ ՀՀ ՇՄՆ-ի և խորհրդատվական մարմնի (Բնապահպանական գործակալություն) հսկողության ներքո: Այն դեպքում, երբ Էմերալդ տարածքը համընկնում է ԲՀՊՏ-ի կամ ԱՏ-ի հետ, ՊՈԱԿ-ը նույնպես պետք է ներգրավվի որպես հիմնական շահագրգիռ կողմ: Իրավասու մարմինները պետք է որոշեն պահպանության հաջողության կանոնավոր վերանայման (հարմարվողական ԿՊ-ի պահանջի) ժամանակացույցը, որը հիմնված է մոնիթորինգի և սխալների դեպքում անհրաժեշտ շտկումների վրա:
Էմերալդ տարածքներում մոնիթորինգի գործողությունները պետք է սերտորեն կապված լինեն պահպանության նպատակների և իրագործված (կամ չիրագործված) պահպանության միջոցառումների հետ: Մոնիթորինգի պլանը պետք է ունենա երկու նպատակ.[26]

- Գնահատել, թե ինչպես են իրականացված պահպանության միջոցառումները նպաստում տարածքի պահպանման նպատակներին հասնելուն:
- Գնահատել կիրառվող պահպանության մեթոդների և մոտեցումների արդյունավետությունը:

[26] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարում: ղեկավար փաստաթուղթ, https://pjp-eu.coe.int/emerald-network/images/pa08e_2014_management_emerald_sites_final.pdf

Ըստ Էմերալդ տարածքների կառավարման ուղեցույցների՝ մոնիթորինգը պետք է իրականացվի երեք փոխկապակցված մակարդակներով.[27]

- Կենսաբազմազանության հիմնական ցուցիչ տարրերի ելակետային մոնիթորինգ և գնահատում, թե որքան հեռու են ներկայիս արժեքները պահպանության նպատակներից:
- Կառավարման միջամտությունների մոնիթորինգ, այսինքն՝ պահպանության միջոցառումներ:
- Ռեժիմի և իրադարձությունների մոնիթորինգ:

Բացի այդ, ԿՊ-ները պետք է թարմացվեն (ԵՄ գործելակերպի համաձայն՝ 10 տարին մեկ): Կառավարման պլանավորման արդի փաստաթղթերի բացակայությունը հանգեցնում է բնության պահպանության հիմնական սկզբունքների թերի ընկալման, թույլ պահպանության և ակտիվ կառավարման մոտեցման բացակայության:

[27] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը:, https://rm.coe.int/16807465b6

# Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների կառուցվածքը (Էմերալդների կառավարման ամբողջական պլանի համար)

Այս գլուխը տրամադրում է համառոտ բացատրություն-ուղեցույցներ, թե ինչպես պետք է լրացվի բովանդակության յուրաքանչյուր կետ, այսինքն՝ սահմանում է ակնկալվող մանրամասնության սանդղակը:

Նպատակն է հասնել Հայաստանի բոլոր տարածքներում ներկայացման միասնական ստանդարտացված ձևի, որպեսզի յուրաքանչյուր ԿՊ էապես չտարբերվի մյուսներից: Նաև պատրաստվել են քարտեզներ և չափորոշիչներ ապագա խորհրդատուների աշխատանքը հեշտացնելու և ՀՀ-ում Էմերալդ ԿՊ-ի հետ կապված իրավասու մարմիններից ակնկալվող գործողությունների շրջանակը հստակեցնելու նպատակով:

## Ընդհանուր հրահանգներ

Բոլոր Էմերալդ տարածքները, որոնք ընդունվել են Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողովի կողմից և սույն ուղեցույցների խնդրո առարկան են, արդեն մանրամասն նկարագրված են իրենց Էմերալդ չափանիշների տվյալների ձևաթղթում, ներառյալ իրենց սահմանները[28]: Էմերալդ տարածքների ստանդարտացված տվյալների ձևաթղթերի բովանդակած տեղեկատվությունը պետք է օգտագործվի և լրացվի ստորև նկարագրված տարբեր տվյալներով, կազմվի և օգտագործվի կառավարման միջոցառումների պլանավորման ընթացքում: Այսպիսով, խորհուրդ է տրվում նախաձեռնել ստանդարտացված տվյալների ձևաթղթերի տեղեկատվության որակի և ամբողջականության մանրակրկիտ ուսումնասիրություն:

Նաև խորհուրդ է տրվում, որ Բեռնի կոնվենցիայի 4-րդ և 6-րդ բանաձևերի (1996 թ.) վերանայված հավելված I-ում նշված բնական կենսամիջավայրերի և տեսակների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը ներառի նաև դաշտային գույքագրում (լրացնելով ստանդարտացված տվյալների ձևաթղթերի տեղեկատվությունը):

Հարկ է նաև ընդգծել, որ ստորև բերված մեկնաբանությունները պայմանավորված են ինչպես տեղանքով, այնպես էլ թիրախային տեսակներով, և փորձագետների ու խորհրդատուների հետ գործակցող թիմն է, որ պետք է պատրաստի Էմերալդ ԿՊ-ը և զբաղվի դրա հետագա զարգացմամբ՝ հաշվի առնելով բոլոր առաջնահերթությունները և 4-րդ ու 6-րդ բանաձևերին առնչվող տեսակներն ու կենսամիջավայրերը: Օրինակ՝ երկրաբանությունը, գեոմորֆոլոգիան և հողի հայեցակետերը կարող են տեղին լինել միայն այն Էմիրալդ տարածքներում, որտեղ այդ գործոններն ուղղակիորեն կապված են 4-րդ բանաձի կենսամիջավայրերի և 6-րդ բանաձի

[28] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ ցանցի ստանդարտ տեղեկատվական ձևաթուղթ [Հրահանգ No. 5-ի Հավելված 1 (1998թ.)] , https://rm.coe.int/1680746bfa

տեսակների հետ: Քննարկվող թեմայի հետ առնչություն չլինելու դեպքում միայն համառոտ նկարագրություն է պահանջվում
Ստորև ներկայացված բոլոր բացատրությունները ցուցիչ են և պետք է հետագայում մշակվեն/փոփոխվեն և որոշակիացվեն ըստ Էմերլալդ ԿՊ-ի փորձագետների թիմի քննական տեսակետի:

## Առաջարկվող կառուցվածք

**ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

**1.1 Ընդհանուր տեղեկություններ և սահմանումներ**

1.1.1. Ուսումնասիրության առաջադրանքի մանրամասներ

Ներկայացված են տվյալ ուսումնասիրության հանձնարարության մանրամասները. նշանակող/պայմանագրային մարմին, պայմանագրի մանրամասներ (պայմանագրի թիվ, պայմանագրային կողմեր, վերահսկիչ հանձնաժողով և այլն, ծրագրի թիմ):

1.1.2. Պահպանության պատմություն

Առկայության դեպքում տարածքի պահպանության պատմության համառոտ նկարագրություն, պարզ ժամանակագրական կարգով հղում նույնականացման ուսումնասիրություններին, վարչական ակտերին և այլ գործողություններին, որոնք ուղղված են բացառապես կամ հիմնականում տարածքի բնության պահպանությանը:

**ԳԼՈՒԽ 2. ԷՄԵՐԱԼԴ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**2.1 Էմերալդ տարածք**

Էմերալդ տարածքը (կամ ուսումնասիրության տարածքը) սահմանվում է որպես տարածք, որը աշխարհագրորեն ընդգրկված է այն Էմերալդ տարածքային գոտիներում, որոնք հանդիսանում են հատուկ կառավարման պլանի առարկա:
Ուսումնասիրվող տարածքի համար տրված են հետևյալ տվյալները.

- աշխարհագրական դիրք,
- կենտրոնական կոորդինատներ, վարչական պատկանելություն, մոտակա քաղաքային կենտրոն(-ներ),
- չափ, սահմաններ և բնույթ,
- տարածքի գնահատում, սահմանների համառոտ նկարագրություն՝ համապատասխան վարչական մակարդակում:

Տեղեկատվությունը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով:

| | |
|---|---|
| **Աշխարհագրական դիրք** | ***[կենտրոնական կոորդինատներ (ԾՄՇ-ից)]*** |
| **Վարչական պատկանելություն** | *[մարզ և մարզային միավոր]* |
| **Տարածք** | *[ԾՄՇ-ից ձեռք բերվող]* |

**2.2 Աբիոտիկ միջավայր**

Տարածքի աբիոտիկ միջավայրի այն տարրերը, որոնք առնչվում են պահպանվող օբյեկտի (օբյեկտների) պահպանմանը, տրված են շատ համառոտ և կարող են տարածքի բնութագրման, պահպանական գոտիների սահմանման, օգտագործման պայմանների և սահմանափակումների որոշակիացման չափանիշ ծառայել՝ 4-րդ (1996թ.) և 6-րդ (1998թ.) բանաձևերով ամրագրված կենսամիջավայրերի և տեսակների պահպանության նպատակով:

Աբիոտիկ միջավայրի տարրերը պետք է համառոտ ներկայացվեն, հիմնվելով ԿՊ-ում ներկայացված փորձագետների դատողությունների վրա, միայն այն պարագայում, երբ դրանք ներազդում են 4-րդ (1996թ.) և 6-րդ (1998թ.) բանաձևերով ամրագրված կենսամիջավայրերի և տեսակների վրա: Նման աբիոտիկ տարրեր կարող են լինել.

- Երկրամորֆոլոգիա, լանդշաֆտ, օրինակ՝ ռելիեֆի և լանդշաֆտի կամ լանդշաֆտային տարբեր միավորների նկարագրություն:
- Երկրաբանություն, օգտակար հանածոների պաշարներ/հանքեր և հողի տեսակներ, օրինակ՝ էրոզիայի / անապատացման / դեգրադացված հողերի տարածքների նույնականացում:
- Հիդրոլոգիա և ջրի որակ, օրինակ՝ մակերևութային ջրերի, հողօգտագործման և միջոցառումների տեղորոշում, որոնք վերաբերում են մակերևութային ջրերի, մակերևութային ջրերի որակի տվյալներին:
- Օդի որակ և աղմուկի մակարդակ - օդի աղտոտման աղբյուրներ, ինչպես նաև աղմուկի նկատելի խանգարումը:
- Օդերևութաբանական բնութագրեր և կենսակլիմայական պայմաններ, հատկապես, երբ դրանք կարող են ազդել գոտիավորման առաջարկների վրա:

**2.3 Կենսամիջավայր (կենսամիջավայրեր, ֆլորա և ֆաունա )**

Համառոտ ներկայացված են կենսամիջավայրերը, ֆլորան և ֆաունան:

**2.4 Հողօգտագործում, ներառյալ ներկա կարգավիճակը և սեփականության իրավունքը, ինչպես նաև պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոնները (աբիոտիկ, կենսաբանական, մարդու գործունեություն)**

Այս գլխում ներկայացվում են հողօգտագործման/գործունեության հիմնական բնութագրերը, որոնք կարող են անմիջականորեն ազդել պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա, այսինքն՝ կա՛մ բուսական և կենդանական աշխարհի տեսակների ուղղակի օգտագործմամբ, կա՛մ զբաղեցնելով կամ ոչնչացնելով տեսակների բնական կենսամիջավայրերն ու տեսակների կենսամիջավայրերը, և/կամ անուղղակիորեն դեգրադացիայի միջոցով, օրինակ՝ աղտոտվածությամբ:

**2.5 Պահպանվող օբյեկտ(ներ) (բանաձև 4 և 6)**

Այս գլխում հղում է կատարվում տարածքի սպեցիֆիկ բաղադրիչին կամ բաղադրիչներին, որոնք կարևոր են տարածքում առկա և բանաձևեր 4-ում (1996թ.) և 6-ում (1998թ.) բերված տեսակների և բնական միջավայրերի պաշտպանության և պահպանության համար:

Էմերալդ տարածքի ստանդարտացված տվյալների ձևաթղթերի (SDF) տեղեկատվությունը մանրակրկիտ ներկայացված և կազմված է:

2.5.1. Բնական կենսամիջավայրեր

4-րդ բանաձևով (1996թ.) ամրագրված բոլոր կենսամիջավայրերը ներկայացված են աղյուսակով, ինչպես նաև դրանց ծավալը և պետական պահպանության աստիճանը, համապատասխան տվյալների առկայության դեպքում: Այս բաժնում ներկայացված են հետազոտվող կենսամիջավայրերի տեսակների առկայությունը և պահպանության աստիճանը հետազոտվող տարածքի տարբեր տեղանքներում, ինչպես նաև դրանց կապն ավելի մեծ տարածքի բուսականության և աբիոտիկ բնութագրերի հետ:

ճնշումներն ու սպառնալիքները վերլուծվում և փաստագրվում են, որոնց հաջորդում է ճնշումների և սպառնալիքների հնարավոր հետևանքների գնահատումը՝ նպատակ ունենալով պահպանության նպատակների հետ համակցված կառավարման միջոցառումներ առաջարկել:

2.5.2. Կենդանական աշխարհի տեսակներ

Կենդանական աշխարհի կարևոր տեսակներ են ներկայացվում, որոնք ներառում են այն տեսակները, որոնք բերված են 6-րդ բանաձևում (1998), ինչպես նաև այլ տեսակները, որոնք դասակարգվում են որպես հազվագյուտ, խոցելի կամ անհետացող, ինչպես նշվում է Կարմիր գրքում և համանման հրումներում:

Դրանք թվարկված են աղյուսակում՝ ուսումնասիրվող տարածքում դրանց առատության և պոպուլյացիայի չափերի գնահատման հետ մեկտեղ: Տեքստում մեկնաբանվում է ուսումնասիրվող տարածքի տարբեր վայրերում կարևոր տեսակների պոպուլյացիաների (կաթնասուններ, թռչուններ, սողուններ, երկկենցաղներ, ձկներ, անողնաշարավորներ) գոյության և պահպանության կարգավիճակը/աստիճանը, դրանց կապը բուսականության հետ, ինչպես նաև ավելի մեծ տարածքի աբիոտիկ առանձնահատկությունները:

Այս տեսակների համար ճնշումների և սպառնալիքների վերլուծությունից և փաստագրումից հետք կատարվում է ճնշումների և սպառնալիքների հնարավոր հետևանքների գնահատումը՝ նպատակ ունենալով առաջարկել կառավարման միջոցառումներ՝ համակցված պահպանության նպատակների հետ, որոնք կքննարկվեն յաջորդ գլուխներում:

## ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

### 3.1 Պահպանության նպատակների սահմանում պահպանվող օբյեկտի/-ների մակարդակում

Այս բաժնում շեշտը դրվում է պահպանության նպատակների առանձնացման վրա, որոնք պետք է կապվեն առաջարկվող կառավարման միջոցառումների հետ: Պահպանության նպատակների նույնականացման համար հատուկ թիրախներ կարող են սահմանվել կենսամիջավայրերի և տեսակների համար, առանձին առանձնյակների մակարդակում կամ ամբողջ պոպուլյացիայի համար (բոլոր թիրախային կենսամիջավայրերը կամ տեսակները) Էմերալդ տարածքում:

Կենսամիջավայրերի տեսակների համար.

- կենսամիջավայրի կայուն պահպանման կամ տարածքի ավելացում (օրինակ՝ տարածքի ավելացում XX հեկտարով կամ ընդհանուր մակերեսի ավելացում 20%-ով),
- բնութագրիչ տեսակների առկայության ավելացում (օրինակ՝ առանձնյակների կամ զույգերի XX թվով կամ նրանց պոպուլյացիայի չափի 20%-ով ավելացում),
- կենսամիջավայրի կառուցվածքի բարելավում (օրինակ՝ անտառային կենսամիջավայրի ծառաբուսային տեսակները, որոնք 5 մետրից բարձր են, զբաղեցնում են ավելի քան XX հեկտար կամ ընդհանուր տարածքի 75%-ը),
- կենսամիջավայրի տիպի գործառույթների բարելավում (օրինակ՝ առնվազն 3 տարբեր թռչունների տեսակներ են հայտնաբերված հարթավայրերում),
- (ե) կենսամիջավայրի տիպի պահպանման աստիճանի բարելավում (օրինակ՝ Կենսամիջավայրի դիրեկտիվի Հոդված 17-ի շրջաակներում B-ից մինչև A,[29]):

[29] Evans, D. & Arvela, M. 2011. Assessment and reporting under Article 17 of the Habitats Directive - Explanatory Notes & Guidelines for the period 2007-2012 – Final Draft. European Topic Centre on Biological Diversity, https://circabc.europa.eu/sd/a/2c12cea2-f827-4bdb-bb56-3731c9fd8b40/Art17-Guidelines-final.pdf

Յուրաքանչյուր տեսակի համար պահպանման թիրախները ներառում են.

- կայուն միտումի պահպանում կամ թիրախային տեսակների պոպուլյացիայի ավելացում (օրինակ՝ առանձնյակների կամ զույգերի XX թվի պահպանում կամ ավելացում կամ պոպուլյացիայի ընդհանուր աճ 10%-ով),
- դրանց կենսամիջավայրի պահպանության աստիճանի բարելավում (օրինակ՝ կենսամիջավայրի տիպի կամ տեսակների պահպանման աստիճանը, որոնցում տեսակը բնադրում/սնվում է և այլն),
- տեսակի կենսամիջավայրի տարածքի պահպանություն կամ բարելավում (օրինակ՝ տարածությունը մեծացնելով XX հեկտարով կամ չափված ընդհանուր մակերեսը մեծացնելով 10%-ով),
- տեսակների պահպանության կարգավիճակի բարելավում (օրինակ՝ Կենսամիջավայրի դիրեկտիվի Հոդված 17-ի համաձայն B-ից A՝):[30]

### 3.2 Բնական միջավայրի պահպանության ու տնտեսական գործունեության և դրանց զարգացման ներուժի միջև հնարավոր հակասությունների գնահատում և տարբերակում

Այս գլխում քննարկվում են հիմնական ճնշումներն ու սպառնալիքները, որոնք նույնականացվել և թվարկվել են պահպանվող տեսակների, բուսական և կենդանական աշխարհի կարևոր տեսակների, երկրաբանական կազմավորումների և լանդշաֆտի առնչությամբ: Այդ ճնշումներն ու սպառնալիքներն այնուհետև դիտարկվում են գոյություն ունեցող հողօգտագործման, գործելակերպերի և գործունեության տեսակների առնչությամբ:

Ճնշումները և սպառնալիքները գնահատվում և տարբերակվում են ըստ դրանց ինտենսիվության, տևողության, ժամանակավոր կամ մշտական բնույթի և դրանց հակազդելու հնարավորության:

Գնահատման գործընթացի հաջորդ քայլը պետք է պատասխանի հետևյալ հարցին. «Ի՞նչ ճնշումներ/սպառնալիքներ պետք է վերացվեն Էմերալդ տարածքի շրջանակներում և ինչ հերթականությամբ»:

Գոյություն ունեցող գործողությունների/գործարկումների, զարգացման ծրագրերի և ճնշումների/սպառնալիքների միջև կապը տարածականորեն հստակեցված է տարածքի ներսում, և ընդգծվում է դրանց տարածական կարևորությունը հիմնական էկոհամակարգերի տեսակների համար:

Ի լրումն՝ նույնականացված է ուսումնասիրվող տարածքի զարգացման ներուժը, ներառյալ բնական ռեսուրսների օգտագործման մեթոդները և Էմերալդ տարածքի տնտեսական զարգացման ներուժը կենսաբանական բազմազանության և լանդշաֆտի շահագործման և խթանման միջոցով: Այդ մեթոդները պետք է համատեղելի լինեն պահպանվող օբյեկտ (-ների) պահպանման հետ:

[30] Evans, D. & Arvela, M. 2011. Assessment and reporting under Article 17 of the Habitats Directive - Explanatory Notes & Guidelines for the period 2007-2012 – Final Draft. European Topic Centre on Biological Diversity, https://circabc.europa.eu/sd/a/2c12cea2-f827-4bdb-bb56-3731c9fd8b40/Art17-Guidelines-final.pdf

## ԳԼՈՒԽ 4. ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

### 4.1 Գործողությունների պլանի նպատակները, խնդիրները և գործողությունների առաջնահերթությունները

Ելնելով Գլուխ 3.1-ում բերված պահպանության նպատակներից՝ այս գլխում առաջարկվում են պահպանության/կառավարման համապատասխան միջոցառումներ, որոնք կապված են տարածքի պահպանվող օբյեկտ(ներ)ի մաս կազմող հատուկ տեսակների և (կամ) կենսամիջավայրերի հետ: Առաջարկվող թիրախային կառավարման միջոցառումները կարող են ներառել.

- անհապաղ գործողությունների և միջամտությունների հստակ առաջարկներ այն դեպքում, եթե պարզվել է խնդրի պատճառը և հայտնի է դրա դեմ պայքարի ձևը,
- հստակ միջոցառման փորձնական կիրառման առաջարկներ՝ հիմնված խնդրի պատճառի վարկածի վրա,
- մասնագիտացված ուսումնասիրություն իրականացնելու առաջարկներ, որոնցից բխում են կոնկրետ գործողությունների առաջարկներ, եթե պատճառները հնարավոր չէ պարզել ԿՊ-ի համատեքստում (օրինակ՝ արոտավայրի ԿՊ-ի անհրաժեշտություն կամ էկոտուրիստական կարողունակության ուսումնասիրություն):

Առաջարկվող միջոցառումներից յուրաքանչյուրի համար ակնկալվող օգուտը գնահատվում է որակապես՝ ըստ կատեգորիաների (բարձր, միջին, ցածր): Լրացուցիչ կերպով գնահատվում է դրա արդյունավետության ակնկալվող ժամանակային տևողությունը և դասակարգվում կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ: Գնահատվում է նաև յուրաքանչյուր միջոցառման սիներգիայի պոտենցիալ աստիճանը մեկ կամ մի քանի այլ միջոցառումների հետ, որոնց հետ դրանք համադրելի են: Սիներգիայի աստիճանը որակապես գնահատվում է և դասկարգվում որպես բարձր, միջին կամ ցածր:

Որոշվում է նաև առաջարկվող միջոցառման տեսակը (վարչական, իրավական, կարգավորող, ֆինանսական, տեղեկատվական, ծրագրի տեսքով միջամտություն և այլն), գնահատվում է դրա իրականացման մոտավոր արժեքը և նշվում են դրա իրականացման հետ կապված մարմինները: Կառավարման միջոցառումների օրինակները թվարկված են Էմերալդ տարածքի կառավարման ուղեցույցի նախագծի հավելված 1-ում և 2-ում[31], որոնք պետք համաձայնեցվեն Էմերալդ ԿՊ-ի փորձագետների թիմի հետ:

Օգտագործման համար պատրաստի Գործողությունների ծրագրի աղյուսակը կարող են մշակել ԿՊ խորհրդատուները/փորձագետները, դրա օրինակը զետեղված է հավելված Գ-ում (Գործողությունների ծրագրի շրջանակ՝ տարեկան գործունեության բաշխման համար (օրինակ):

### 4.2 Գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները. i. մարդկային, ii. ժամանակային, iii. ֆինանսական

Այս գլխում նկարագրված են պահպանման/կառավարման միջոցառումների (աշխատանքային ծրագիր) պլանավորման տարրերը: Ըստ էության՝ տրվում է այն հարցերի պատասխանները, թե

[31] Եվրոպական վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին կոնվենցիա, Էմերալդ տեղամասերի կառավարման ուղեցույցների նախագիծ, ներառյալ կլիմայի փոփոխության հարմարեցումը և մեղմացումը, https://rm.coe.int/16807465b6

ինչ է արվելու, որտեղ, ինչ առաջնահերթությամբ և ժամանակային հաջորդականությամբ, ով ինչ է անելու, ինչ արժեքով, ով է վճարելու և ֆինանսավորման աղբյուրները:

## ԳԼՈՒԽ 5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

### 5.1 Պահպանության աստիճանի մոնիթորինգ՝ կապված պահպանության նպատակների հետ

Այս բաժինը ներառում է կարևոր կենսամիջավայրերի և տեսակների կարգավիճակի գնահատումը՝ համապատասխան ազգային կառավարման մարմնի կողմից մշակված արձանագրությունների համաձայն: Արձանագրությունները կհստակեցնեն կիրառվելիք մեթոդները, հետազոտության հաճախականությունը, հավաքվելիք տվյալները, կիրառվելիք վերլուծությունները և հաշվետվության ձևաչափը: Մոնիթորինգի արդյունքն օգտագործվում է որոշելու համար, թե արդյոք գոյություն ունեցող կառավարման գործիքները պետք է փոխվեն (և եթե այո՛, ինչպես) որպես կառավարման գործընթացի պարբերական վերանայման գործընթացի մաս (այսպես կոչված, հարմարվողական կառավարում):

### 5.2 Գործողությունների և դրանց արդյունքների դիտարկումների արձանագրում, որը ներառում է.

5.2.1 Կառավարման միջամտությունների մոնիթորինգ[32]

Կառավարման կոնկրետ գործողությունների փաստացի արդյունքներն են գնահատվում՝ և համեմատվում դրանցից ակնկալվող արդյունքների հետ: Գործողությունները կարող են սահմանվել կառավարման պլանում (օրինակ՝ սելավային անտառների և խոնավ տարածքների վերականգնում) կամ առաջանալ վերը նկարագրված ելակետային մոնիթորինգի արդյունքներից (օրինակ՝ տեսակի տեղափոխում կամ նոր սպառնալիքի վերացում) կամ իրադարձությունից (տե՛ս ստորև): Մոնիթորինգը կարող է իրականացվել իրավասու կառավարման մարմնի կողմից (օրինակ՝ ՊՈԱԿ) կամ արտաքին մասնագետների կողմից՝ ըստ անհրաժեշտության (օրինակ՝ ակադեմիական կամ հետազոտական կենտրոնների կամ կենսաբազմազանության մասնագիտացված ընկերությունների մասնագետների կողմից):

5.2.2 Ռեժիմի և իրադարձությունների մոնիթորինգ

Սա ներառում է պատասխանատու կառավարման մարմնի և այլոց կողմից կատարված պատահական դիտարկումների համակարգված հաշվետվություն և գրանցում, օրինակ՝ հայտնված հազվագյուտ չվող թռչուն, կենդանու անսովոր վարք կամ բույսի վաղ ծաղկում: Այդ նպատակով պետք է մշակվի տվյալների ձևաթուղթ և GIS հատուկ շերտ: Ռեժիմի և իրադարձությունների մոնիթորինգի մյուս հայեցակետն այն միջադեպերի մասին է, որոնք կարող են հետևանքներ ունենալ կառավարման առումով, օրինակ՝ ջրհեղեղներ, հրդեհներ, փոթորկի վնասներ անտառներում, թափոնների արտանետում և հիվանդությունների բռնկում:

[32] 1. Գնահատել, թե արդյոք և ինչպես են իրականացվում պահպանության միջոցառումները, որոնք տանում են տեղանքի պահպանման նպատակների ապահովմանը: 2. Գնահատել կիրառվող պահպանության մեթոդների և մոտեցումների արդյունավետությունը:

### 5.3 Պլանի վերանայում

Սահմանել և ներկայացնել ժամանակահատված, որի ընթացքում պլանը պետք է վերանայվի՝ հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները:

## ԳԼՈՒԽ 6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Իրականացված մասնակցային ծրագրի համառոտ ներկայացում՝ համապատասխան լուսանկարչական նյութի միջոցով:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I. Քարտեզներ (Թեմատիկ քարտեզների ստանդարտները տե՛ս Հավելված Ա-ում, իսկ Թեմատիկ քարտեզների օրինակները Հավելված Բ-ում:)

ՀԱՎԵԼՎԱԾ II. Կամընտրական

# Մատենագիտական հղումներ


Bryson J. 2004. “What to do when stakeholders matter: A guide to stakeholder identification and analysis techniques.” *Public Management Review.* 6 (1): 21–53. https://doi.org/10.1080/14719030410001675722

Council of Europe (CoE). 1996. “Resolution No. 4 (1996) listing endangered natural habitats requiring specific conservation measures.” Adopted by the Standing Committee of the Convention on the Conservation of European Wildlife and Natural Habitats on December 6, 1996. https://rm.coe.int/16807469e7

CoE. 1998. “Resolution No. 6 (1998) listing the species requiring specific habitat conservation measures.” Adopted by the Standing Committee of the Convention on the Conservation of European Wildlife and Natural Habitats on December 4, 1998. https://rm.coe.int/1680746afc

CoE. 2014. “Towards Management of Emerald sites: Guidance Document.” https://pjp-eu.coe.int/Emerald-network/images/pa08e_2014_management_Emerald_sites_final.pdf

CoE (Council of Europe). 2015. “Draft Guidelines on managing the Emerald sites, including climate change adaptation and mitigation.” https://rm.coe.int/16807465b6

CoE (Council of Europe). 2016. “The Emerald Network: A Network of Areas of Special Conservation Interest for Europe.” https://rm.coe.int/168074669d

CoE (Council of Europe). 2019. “Draft Recommendation on detecting, reporting, assessing and responding to changes in the ecological character of Emerald Network sites.” https://rm.coe.int/draft-recommendation-on-detecting-reporting-assessing-and-responding-t/16809871a7

European Commission, Directorate-General for Environment. 2018. “Guidance on how to support Natura 2000 farming systems to achieve conservation objectives, based on Member States good practice experiences.” Luxembourg: European Union. https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/2e55717e-9185-11e9-9369-01aa75ed71a1

European Commission, Directorate-General for Environment. 2019. “2.3.1. Setting site-level conservation objectives” in *Managing Natura 2000 sites – The provisions of Article 6 of the ‘Habitats’ Directive 92/43/EEC.* Luxembourg: European Union. https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/11e4ee91-2a8a-11e9-8d04-01aa75ed71a1

Evans D and Arvela M. 2011. “Assessment and reporting under Article 17 of the Habitats Directive. Explanatory Notes & Guidelines for the period 2007-2012.” European Topic Centre on Biological Diversity. https://circabc.europa.eu/sd/a/2c12cea2-f827-4bdb-bb56-3731c9fd8b40/Art17-Guidelines-final.pdf

Gleason M, McCreary S, Miller-Henson M, Ugoretz J, Fox E, Merrifield M, McCintock W, Serpa P, and Hoffman K. 2010. “Science-based and stakeholder-driven marine protected area network planning: A successful case study from north central California.” *Ocean & Coastal Management.* 53(2): 52–68. https://doi.org/10.1016/j.ocecoaman.2009.12.001

Jaansoo A. 2019. “Methodology for stakeholder engagement within the project Inter Ventures.” Gronau, Germany: Association of European Border Regions. https://projects2014-2020.interregeurope.eu/fileadmin/user_upload/tx_tevprojects/library/file_1575537468.pdf

Leach WD and Pelkey NW. 2001. “Making Watershed Partnerships Work: A Review of the Empirical Literature.” *Journal of Water Resources Planning and Management.* 127(6): 378–385. https://doi.org/10.1061/(ASCE)0733-9496(2001)127:6(378)

Leach WD, Pelkey NW, and Sabatier PA. 2002. “Stakeholder partnerships as collaborative policymaking: Evaluation criteria applied to watershed management in California and Washington.” *Journal of Policy Analysis and Management.* 21(4): 645-670. https://www.jstor.org/stable/3326015

Luyet V, Schlaepfer R, Parlange MB, and Buttler, A. 2012. “A framework to implement Stakeholder participation in environmental projects.” *Journal of Environmental Management.* 111: 213–219. https://doi.org/10.1016/j.jenvman.2012.06.026

Reed MS. 2008. “Stakeholder participation for environmental management: a literature review.” *Biological Conservation.* 141: 2417– 2431. https://doi.org/10.1016/j.biocon.2008.07.014

# Հավելվածներ

# Հավելված Ա. Թեմատիկ քարտեզների ստանդարտներ

Քարտեզների առաջարկվող շերտերը պայմանական են և պետք է լրամշակվեն, փոփոխվեն և ճշգրտվեն Էմերալդ տարածքների կառավարման հարցերով փորձագիտական թիմի հույժ կարևոր դիտողությունների հիման վրա (ԿՊ)։ Էմերալդ ԿՊ-ում աբիոտիկ և/կամ բիոտիկ տեղեկատվության ներառումը, որը ձեռք է բերվում կամ գրասենյակային ուսումնասիրությունների կամ դաշտային աշխատանքի միջոցով, **կախված է տվյալների հասանելիության, տարածքի տեղակայման վայրի և պահպանվող օբյեկտի համար նշանակությունից**:

Քարտեզի համար բոլոր առաջարկվող շերտերը կախված են տեղանքին հատուկ և թիրախային տեսակներից, և փորձագետների և խորհրդատուների թիմը, որը մշակում է Էմերալդ տարածքի ԿՊ-ն, պետք է լրամշակի այն շերտերը՝ ելնելով այդ շերտերի միջավայրերի և տեսակների կարևորությունից, որոնք նշվում են Բանաձևեր 4-ում և 6-ում։ Օրինակ՝ երկրաբանական, երկրամորֆոլոգիական և հողային ասպեկտները կարող են տեղին լինել միայն Էմերալդ ցանցի այն տարածքներում, որտեղ այդ գործոններն ուղղակիորեն կապված են թիվ 4 բանաձևի կամ թիվ 6 բանաձևի մեջ նշված հատուկ միջավայրի տիպի կամ տեսակների հետ։ **Եթե այս ասպեկտները չեն վերաբերում քննարկվող խնդրին, դրանք կարող են բաց թողնվել, պայմանով, որ կառավարման պլանը հակիրճ հիմնավորում է այս տեղեկատվության բացակայությունը**:

Ստորև ներկայացվում են Էմերալդ ԿՊ -ում պատրաստված բոլոր քարտեզների ընդհանուր շերտերը :

- Երկրի սահմաններ
- վարչական սահմաններ (Առաջին մակարդակը հանդիսանում են ՀՀ շրջանները կամ *մարզերը*։)
- Էմերալդ տարածքի սահմաններ
- Ճանապարհային ցանց
- Կարևոր մակերևութային ջրի համակարգեր
- Բնակավայրի սահմաններ

# Հավելված Ա. Թեմատիկ քարտեզների ստանդարտներ

| Հ | Քարտեզի կատեգորիա | Քարտեզի անվանում | Քարտեզի նկարագրություն | Քարտեզների շերտեր (ինդիկատիվ)[33] |
|---|---|---|---|---|
| 1 | Ներածություն | միջավայր/ ներկա իրավիճակ | Տարածական տեղեկատվություն ուսումնասիրվող տարածքի միջավայրի, աբիոտիկ ու մարդածին միջավայրի և գործունեության հիմնական բնութագրերի վերաբերյալ: | • Տարածական-քաղաքաշինական բնույթի ինստիտուցիոնալ կարգավորումներ<br>• Հողօգտագործման ծածկույթ<br>• Ստեղծված պահպանվող տարածքներ (օրինակ՝ ԲՊՀՏ-ներ)<br>• Մշակութային ժառանգության առանձնահատկություններ<br>• Էներգետիկ և տրանսպորտային ենթակառուցվածք (բազմանկյուն, բեկյալ և/կամ կետային հատկանիշ)<br>• Այլ մարդածին գործունեություն (օրինակ՝ զբոսաշրջային և արդյունաբերական գործունեություն)[34] |
| 2 | Պահպանվող օբյեկտների նկարագրություն | Աբիոտիկ միջավայրի կարևոր տարրեր (**ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ**) | Կենտրոնանում է ուսումնասիրվող տարածքի աբիոտիկ միջավայրի նկարագրման վրա, ինչպիսիք են ջրագրական ցանցը, երկրամորֆոլոգիան, երկրաբանությունը և այլն:<br><br>**(ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ և պատրաստվում են ՄԻԱՅՆ այն դեպքում, երբ դրանք ազդեցություն են թողնում կամ ուղղակիորեն կապված են 4-րդ բանաձևի հատուկ կենսամիջավայրի և/կամ 6-րդ բանաձևի տեսակների հետ:** | • Ջրհեղեղային գոտիներ<br>• Ստորերկրյա ջրերի կարևոր համակարգեր<br>• Անցումային կարևոր համակարգեր<br>• Գեոմորֆոլոգիական և լանդշաֆտային կարևոր առանձնահատկություններ |

[33] Քարտեզների առաջարկվող շերտերը ցուցիչ են և պետք է հետագայում զարգացվեն/փոփոխվեն ու որոշակիացվեն Էմերալդ ԿՊ-ի փորձագետների թիմի քննական տեսակետի հիման վրա: Նախնական աբիոտիկ և/կամ կենսաբանական տեղեկատվությունը, որը տրամադրվում է Էմերալդ ԿՊ-ի շրջանակներում (վերցված առկա տվյալների բազաներից կամ դաշտային աշխատանքներից), կախված է առկա տեղեկատվությունից, տարածքի գտնվելու վայրից և պահպանվող օբյեկտ(ներ)ից: Տարածքին և թիրախային տեսակներին վարաբերող բոլոր քարտեզները կախված են Էմերալդ տարածքի ԿՊ-ն մշակող փորձագետներից և խորհրդատուներից, թե ինչպես կընդգրկվեն՝ ելնելով առաջնահերթություններից և որոնք են կարևոր 4-րդ և 6-րդ բանաձևերի թիրախային տեսակների ու կենսամիջավայրերի համար: Օրինակ՝ երկրաբանությունը, երկրամորֆոլոգիան և հողերի շերտերը կարող են տեղին լինել միայն այն Էմիրալդ տարածքներում, որոնք ուղղակիորեն կապված են 4-րդ բանաձևի կենսամիջավայրերի և 6-րդ բանաձևի տեսակների հետ: Թիրախների հետ առնչություն չունենալու դեպքում կարելի է վերջինից խուսափել: **(ԿՊ-ում համառոտ բացատրության տրամադրումից հետո):**

[34] Սրանք ընդհանուր շերտեր են բոլոր քարտեզների համար, որոնք պատրաստվում են Էմերալդ տարածքի ԿՊ-ի համար

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | | Բեռնի կոնվենցիայի 4-րդ և 6-րդ բանաձևերի կենսամիջավայրերի և բուսատեսակների տարածվածություն և առատություն | Բեռնի կոնվենցիայի 4-րդ և 6-րդ բանաձևերում ընդգրկված կենսամիջավայրերի և ֆլորայի կարևոր տեսակների տարածվածություն: | • Բեռնի կոնվենցիսայի 4-րդ և 6-րդ հավելվածներում ընդգրկված կենսամիջավայրերի և բուսատեսակների, ինչպես նաև կարևոր կենդանատեսակների տարածվածություն)<br>• Հողօգտագործման ծածկույթ |
| 4 | | Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևի կենդանական աշխարհի համար կարևոր տեսակների կենսամիջավայրեր և պոպուլյացիաներ, բացառությամբ թռչնաֆաունայի | Էմերալդ տարածքում հայտնաբերված թռչնատեսակներից բացի, կենդանական աշխարհի մնացած կարևոր տեսակների տարածվածություն: Ֆաունայի տեսակները թվարկված են Բեռնի կոնվենցիայի 6-րդ (1998 թ.) բանաձևի վերանայված հավելված I-ում և լրացվում են ՀՀ բույսերի և կենդանիների կարևոր տեսակներով (Կարմիր գիրք, 2010թ.): | • Բեռնի կոնվենցիայի 4-րդ և 6-րդ հավելվածներում ընդգրկված կենսամիջավայրերի և կենդանատեսակների, ինչպես նաև ՀՀ կարևոր կենդանատեսակների տարածվածություն (Կարմիր գիրք, 2010թ.)<br>• Հողօգտագործման ծածկույթ |
| 5 | | Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևի կարևոր թռչնատեսակների կենսամիջավայրեր և պոպուլյացիաներ | Էմերալդ տարածքում հայտնաբերված կարևոր թռչնատեսակների տարածվածությունը: Թռչնատեսակները թվարկված են Բեռնի կոնվենցիայի 6-րդ (1998թ.) բանաձևի վերանայված հավելված I-ում և լրացվում են ՀՀ կարևոր բուսատեսակներով և կենդանիներով (Կարմիր գիրք, 2010թ.): | • Ամենակարևոր (Կարմիր գրքում գրանցված, խոցելի) թռչնատեսակների բաշխվածություն |
| 6 | | Ճնշումներ/սպառնալիքներ պահպանվող օբյեկտների համար | Ցույց է տալիս այն տարածքները, որտեղ հայտնաբերվել են այնպիսի գործողություններ, որոնք համարվում են ճնշում կամ կարող են վտանգ ներկայացնել ապագայում ուսումնասիրվող տարածքների պահպանվող օբյեկտների համար: | • Սպառնալիքներ պահպանվող օբյեկտներին<br>• Ճնշումներ պահպանվող օբյեկտների վրա |
| 7 | | Պահպանվող օբյեկտների սահմանազատում (**ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ**) | Ներկայացնում է առաջարկություններ ու եզրակացություններ պահպանվող տարածքների և, անհրաժեշտության դեպքում, տարածաշրջանային գոտիների ու էկոլոգիական միջանցքների նշանակման վերաբերյալ: Այն նաև ցույց է տալիս պահպանության գոտիների սահմանազատումը, որոնք ներքին բաժանման են ենթարկում պահպանվող տարածքները: Պահպանական գոտիները առանձնացվում են Natura 2000-ի տարածքների օրինակով: | • Հաստատված պահպանվող տարածքներ (օրինակ՝ ԲՀՊՏ-ներ)<br>• Էկոլոգիական միջանցքներ<br>• Տարածաշրջանային պահպանության գոտիներ<br>• Առաջարկվող պահպանվող տարածքներ (բացի Էմերալդ տարածքներից) |
| 8 | Էմերալդ տարածքի և պահպանվող օբյեկտների կառավարում | Կառավարման միջոցառումներ | Էմերալդ ԿՊ-ում ներկայացված կառավարման միջոցառումների իրականացման տարածքների քարտեզագրում | • Կառավարման առաջարկվող միջոցառումներ |

# Հավելված Բ. Թեմատիկ քարտեզների օրինակներ (ցուցադրական քարտեզներ shape ֆայլերում)

| Հ | Քարտեզի անվանում | Քարտեզ |
|---|---|---|
| 1 | միջավայր/ ներկա իրավիճակ |  |

| | | |
|---|---|---|
| 2 | Աբիոտիկ միջավայրի կարևոր տարրեր (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ) |  |

| | | |
|---|---|---|
| 3 | Բեռնի կոնվենցիայի 4-րդ և 6-րդ բանաձևերի կենսամիջավայրերի և բուսատեսակների տարածվածություն և առատություն |  <br>**Distribution and abundance of Habitat types and flora species of Resolution 4 of the Bern Convention**<br>**Proposed Emerald Site:**<br>**AM0000002 - XXXXXX**<br>**FUNDING ORGANIZATION**<br>LOGO<br>  <br>**Map Number:**<br>3<br>Coordinate System: WGS 1984 UTM Zone 38N<br>Projection: Transverse Mercator<br>Datum: WGS 1984<br>False Easting: 500.000,0000<br>False Northing: 0,0000<br>Central Meridian: 45,0000<br>Scale Factor: 0,9996<br>Latitude Of Origin: 0,0000<br>Units: Meter<br>0 1,75 3,5 7 10,5 14 Kilometers<br>**SCALE:** 1:100.000<br>**Legend**<br>**Distribution of habitats types and Flora Species of Resolution 4 of the Bern Convention**<br>Corydalis thasia<br>...<br>Fritillaria obliqua<br>**Land Use**<br>Airports<br>...<br>Grasslands<br>Road network<br>Settlement boundaries<br>Important surface water systems<br>Emerald sites boundaries<br>Administrative boundaries level 1 - Marzer<br>Republic of Armenia<br>**COMPILATION:**<br>kartECO environmental and energy consultancy<br>**DATE:** XX/06//2023 |

| | | |
|---|---|---|
| 4 | Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևի կենդանական աշխարհի համար կարևոր տեսակների կենսամիջավայրեր և պոպուլյացիաներ, բացառությամբ թռչնաֆաունայի |  |

**Habitats and populations of important fauna species of Resolution 6 of the Bern Convention other than avifauna**

**Proposed Emerald Site:**
**AM0000002 - XXXXXX**

**FUNDING ORGANIZATION**

LOGO




**Map Number:**

**4**

Coordinate System: WGS 1984 UTM Zone 38N
Projection: Transverse Mercator
Datum: WGS 1984
False Easting: 500.000,0000
False Northing: 0,0000
Central Meridian: 45,0000
Scale Factor: 0,9996
Latitude Of Origin: 0,0000
Units: Meter

0 1,75 3,5 7 10,5 14 Kilometers

**SCALE:** 1:100.000

**Legend**

**Distribution of habitat types and Fauna Species of Resolution 6 of the Bern Convention and important species (Red Book)**

- Emys orbicularis
- ...
- Zamelis situla

**Land Use**

- Airports
- ...
- Grasslands

- Road network
- Settlement boundaries
- Important surface water systems
- Emerald sites boundaries
- Administrative boundaries level 1 - Marzer
- Republic of Armenia

**COMPILATION:** kartECO

kartECO environmental and energy consultancy

**DATE:** XX/06//2023

| | | |
|---|---|---|
| 5 | Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևի կարևոր թռչնատեսակների կենսամիջավայրեր և պոպուլյացիաներ |  |

**Habitats and populations of important avifauna species of Resolution 6 of the Bern Convention**

**Proposed Emerald Site:**
**AM0000002 - XXXXXX**

**FUNDING ORGANIZATION**

LOGO




**Map Number:**

**5**

Coordinate System: WGS 1984 UTM Zone 38N
Projection: Transverse Mercator
Datum: WGS 1984
False Easting: 500.000,0000
False Northing: 0,0000
Central Meridian: 45,0000
Scale Factor: 0,9996
Latitude Of Origin: 0,0000
Units: Meter

0 1.75 3,5 7 10.5 14 Kilometers

**SCALE:** 1:100.000

**Legend**

**Distribution of most important (red-listed, sensitive) avian species listed in revised Annex I of Resolution 6**

- Aquila fasciata
- ...
- Falco peregrinus

- Road network
- Settlement boundaries
- Important surface water systems
- Emerald sites boundaries
- Administrative boundaries level 1 - Marzer
- Republic of Armenia

**COMPILATION:** kartECO

kartECO environmental and energy consultancy

**DATE:** XX/06//2023

| | | |
|---|---|---|
| 6 | Ճնշումներ/սպառնալիքներ պահպանվող օբյեկտներին |   |

| | | |
|---|---|---|
| 7 | Պահպանվող օբյեկտների սահմանազատում (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ) |   |

| | | |
|---|---|---|
| 8 | Կառավարման միջոցառումներ |  |

## Հավելված Գ. Գործողությունների ծրագրի շրջանակը՝ գործողությունները տարեկան բաշխելու համար (օրինակ)

| Հղման կոդ | Գործողության համառոտ նկարագրությունը | Թիրախային տարածքներ/տեսակներ/կենսամիջավայրեր/տարածքներ | Մոնիթորինգի ցուցիչ | Ժամանակահատված |
|---|---|---|---|---|
| | | | | |
| ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| 1-0-1 | | | | |
| 1-0-2 | | | | |
| 1-0-3 | | | | |
| | | | | |
| ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| 2-0-1 | | | | |
| 2-0-2 | | | | |
| 2-0-3 | | | | |
| | | | | |
| ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| 3-0-1 | | | | |
| 3-0-2 | | | | |
| 3-0-3 | | | | |
| | | | | |
| Այլ | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման ուղեցույցներ

Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման ղեկավար ցուցումները նպատակ ունեն աջակցել Հայաստանի իշխանություններին Էմերալդ տարածքների արդյունավետ կառավարման պլաններ մշակելու գործում: Այս կառավարման պլանները խիստ անհրաժեշտ են տեսակների ու կենսամիջավայրերի պահպանության և պահպանության բավարար մակարդակի հասնելու համար:

Հաշվետվությունը ներկայացնում է Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման մեթոդաբանությունը և կառուցվածքը՝ առաջարկելով ուղեցույցներ տարբեր սցենարների համար, ներառյալ բնության հատուկ պահպանվող բնական տարածքների, անտառային տնտեսությունների և այլ հողատարածքների համար: Այն նաև ընդգծում է կառավարման պլանների կանոնավոր մշտադիտարկման, վերանայման և թարմացումների կարևորությունը՝ դրանց արդյունավետությունը և համապատասխանեցումը պահպանության զարգացող պրակտիկային ապահովելու համար: Այս հաշվետվությունում ներկայացված առաջարկությունները նպատակ ունեն պարզեցնել Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման և հաստատման գործընթացը Հայաստանում՝ նպաստելով շրջակա միջավայրի պահպանության ջանքերին:

Կիրառելով այս առաջարկությունները՝ Հայաստանը կարող է ուժեղացնել պահպանման իր ջանքերը և պահպանել իր արժեքավոր տեսակներն ու կենսամիջավայրերը:

**Կոնտակտային տվյալներ:**

www.eu4environment.org

Action implemented by:
OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP | karEC